№ 156 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 21

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 21 № 156

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Օգոստոսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 րուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նախկին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։

Մկրտում Հայրապետեան Սահակեանը սրտի կսկիծով յայտնում է իր ընկերներին ու բարեկամներին իր անմոռանալի ամուսնու՝

ՆԱՏԱԼԻԱ ՍԱՀԱԿԵԱՆԻ

անժամանակ մահը։ Ամբիծքը այսօր, երեքշաբթի, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը վաղը, չորեքշաբթի, հանգուցեալի բնակարանից (Աբաս-Աբազովի հրապար. Մողնինսկի 3-րդ տուպիկ № 17) դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

Ալեքսէյ, Կեկել, Փեփել և Յովհաննէս Յարութիւնեանները և Սոնիա, Հայկանոյշ Տէր-Գրիգորեանները սրտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին ու բարեկամներին՝ առաջին երկուսը իրանց դստեր, երրորդը թոռան, չորրորդը եղբօրաղջկայ և վերջինները իրանց թանգագին քրոջ՝

ՆԱՏԱԼԻԱ ՍԱՀԱԿԵԱՆԻ

վաղաժամ մահը։ Ամբիծքը այսօր, երեքշաբթի, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը վաղը, չորեքշաբթի, հանգուցեալի բնակարանից (Աբաս-Աբազովի հրապար. Մողնինսկի 3-րդ տուպիկ № 17), դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

ԷԼԵՔՏՐՕ-ԲԻՕԳՐԱՖ

ԷԼԵՔՏՐՕ-ԲԻՕԳՐԱՖ

„ՄՈՒԶԱ“

Միխայլովսկի պր. № 163, Բակինսկայա փող. անկիւն, Դիտանոցի հանդէպ.

Յուլիսի 20-ից [illegible]

Ծրագրից դուրս

1) ԱԼԵՔՍԱՆԴՐ III-Ի ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՆՈՅԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՅՍՐԻ և ԿԱՅՍՐՈՒՀՈՒ ներկայութեամբ։
2) Ճանապարհորդութիւն ՆԻՑՑԱՅԻՑ մինչև ՊԻԻԺԻ.
3) ՍՊԱՆԻԱՅԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ։
4) ԴՕՆ-ԿԱՐԼՕՍ, Նշանաւոր ողբերգութիւն սպանական կեանքից։
5) ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ. ՋԱՐԱՃԻ

679 1—1

ԷԼԵՔՏՐՕ-ԲԻՕԳՐԱՖ

Զանգեզուր գաւառի՝ ՂԱՓԱՆԻ և ՄԵՂՐԻԻ շրջանի գիւղական միդասեան դպրոցների համար

հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Առաւելութիւն կը տրվի Ներսիսեան դպրոց կամ Գէորգեան ճեմարան աւարտածներին։ Խնդրատու ուսուցիչները պիտի ներկայացնեն իրանց աւարտման վկայականները կամ նրանց պատճէնները։ Պայմաններն են. բնակարան, ծառայ, վառելիք և 420—480 ր. ռոճիկ։ Մանրամասն պայմանների մասին ցանկացողները թող բարեհաճեն դիմել մինչև օգոստոսի 10-ը հետևեալ հասցէով՝ Баку, контора О-ва „Арамаздъ“ А. Вачьянцъ.

(հ. չ. և.) (առ.) 657. 3—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ

(ОБОИ)

ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼԻ

ֆաբրիկայի

Գտնվում է Կայսրութեան բոլոր մեծ քաղաքներում։

Բաժանմունքը Թիֆլիսում—Գօլօվինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.

Գները ֆաբրիկային են։

(չ. և.) ա. 197. 25—20

ԺԱՄԱՆԱԿՆ Է

Խօսելով մեր կրթական գործի զարգացման մասին՝ մենք անցեալ անգամ շօշափեցինք նիւթական միջոցների խնդիրը։

Ի՞նչպէս ապահովել դպրոցը, որ նա կարող լինի կանոնաւոր կերպով գործել։

Մենք յիշատակեցինք դէպքեր, երբ դպրոցը ոչ միայն հրաժարվում է իր ծրագրի ընդարձակման առաջարկներից, այլ և անկարող է հանդիսանում եղածը պահպանել։

Կան դպրոցներ, որոնք ունեն կալուածքներ, կտակով թողած նուիրատուութիւններ, եկեղեցուց որոշված գումարներ, որոնցով դպրոցը ապահովում է իր բոլոր ծախքերը, կամ սրանց մի պատկառելի մասը։ Բայց աւելի շատ են այնպիսիները, որոնք չունեն մշտական մուտք և բոլոր իրանց միջոցները պէտք է ձեռք բերեն տարվայ ընթացքում եկող հասոյթներից։

Այդ հասոյթները յաճախ ենթարկվում են պատահականութեան ազդեցութիւններին և չեն մտնում դպրոցի դրամարկղի մէջ այն համակարգութեամբ և քանակով, որ սպասելի էր։

Այդ հասոյթների աւելացման և կանոնաւորութեան հոգատարութեան միջոցին շատ անգամ յարուցվել է կրթական տուրք սահմանելու հարցը, որը սակայն երբեք չէ ստացել դրական լուծում այն իմաստով, ինչպիսին նախատեսված է Փոխարքայի տուած ժամանակաւոր կանոններում։

Դպրոցական տուրքի խնդիրը եղել է խօսակցութեան քննութեան նիւթ թէ հասարակական խաւերում և թէ լրագրական էջերում, բայց նա լուրջ կերպով չէ մշակված, ուստի և այնքան վստահութիւն չէ շահել, որ կարելի լինէր հեղինակօրէն գործադրել նրան կեանքի մէջ։

Եւ այդպիսով կրթական գործի կազմակերպութեան նպաստող մի հանգամանք մնացել է բոլորովին անձեռնմխելի, սպասելով իր գործնական իրականացման հերթին։

Եթէ դպրոցական տուրքի կազմակերպութեան ծրագիրը մինչև այժմ չէ իրագործվել, դա նշան է այն բանի, որ որքան էլ հեշտ է երևացել այդ տուրքի մասին ասել-խօսելը, այնքան էլ հեշտ չէ եղել նրան իրական կեանքի սեփականութիւն դարձնելը։

Դպրոցական տուրք սահմանելը լուրջ և ծանրակշիռ մի գործ է, որի կազմակերպութեան համար անհրաժեշտ է նկատի առնել թէ մեր կեանքի մի քանի պայմանների բնաւորութիւնը և առանձնայատկութիւնները և թէ իրաւական ու վարչական հանգամանքներ։

Արդարև՝ տուրքերի սահմանումը, քանակը, հաւաքման ժամանակը և եղանակը, վարչական մարմինների բռնելիք դերը և մի քանի ուրիշ խնդիրներ պահանջում են, որ դպրոցական տուրքերը սահմանող ծրագիրը մշակված լինի լիակատար կերպով և չը պարունակէ այնպիսի պակասութիւններ, որոնք յետոյ դարձնեն այդ ծրագիրը անժողովրդական և իրագործութեան համար ծանր ու դժուարին։

Եթէ դպրոցական ծախքերի ապահովութեան հարցը կարևոր է և եթէ նրա լուծման միջոցներից մէկն էլ դպրոցական տուրքերի կազմակերպութեան գործն է, ուստի անհրաժեշտ է, որ յատուկ մի խորհրդակցութիւն կամ յանձնաժողով զբաղվէր այդ կազմակերպութեան համար նպատակայարմար պայմաններ մշակելով։

Այդպիսի խորհրդակցութիւն կամ յանձնաժողով կարող էր կազմել թէ Էջմիածինը և թէ ուսուցչական միութիւնը։

Ժամանակն է խնդիրը առաջ քաշելու, ուսումնասիրելու և նպատակայարմար եղանակով կարգադրելու։

Ա. Քալանթար

ԿԱՅՍՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Շէրբուրգ, 18 յուլիսի

Յուլիսի 17-ին, երեկոյեան 10 ժամ 30 րոպէին սէմաֆորը նշան տուեց, որ ռուսական նաւատորմը գտնվում է Գրինէ հրուանդանի բարձրութեան վրա։ (Հ. Գ.)

Առաւօտեան լրագիրները ուրախութեամբ ողջունում են կայսրի և Ֆալիէրի առաջիկայ տեսակցութիւնը, որը նշան է երկու ազգերի յարատև բարեկամութեան։ Մամուլը մատնացոյց է անում, որ երեքպետեան՝ ֆրանս-անգլօ-ռուսական համաձայնութիւնը երբէք այնքան անհրաժեշտ չէ ընդհանուր խաղաղութեան, որպէս այժմ։ (Հ. Գ.)

Շէրբուրգ, 18 յուլիսի

Յուլիսի 17-ին բաւական մռայլ էր եղանակը։ Կայսերական «Շտանդարտ» զբօսանաւը մօտենում էր Շէրբուրգին արևի շլացնող ճառագայթների տակ։ Մօտաւորապէս 1 ժամ 30 րոպէին հեռուից երևացին ռուսական նաւատորմի ծխերը։ «Շտանդարտ» ուղեկից ունենալով «Պօլեարնայա զվեզդա» և ֆրանսիական նաւերը՝ կամաց կամաց մօտեցաւ նաւահանգստին, անցաւ դէպի արևմուտք, ուր խարսխված կանգնած էր «Գալիլէ» կրէյսէրը, որի վրա գտնվում էր Ֆալիէրը։ Որոտացին թնդանօթները։ Կէսօրից յետոյ 2 ժամ 30 րոպէին Ֆալիէր «Գալիլէ» կրէյսէրից անցաւ «Շտանդարտ» զբօսանաւը։ Այդտեղ կայացաւ հանրապետութեան նախագահի հանդիպումը կայսրի հետ։ Ռուսական նաւատորմի մնացած նաւերը խարսխվեցին։ 2 ժամ 50 րոպէին կայսրը և Ֆալիէրը վերադարձան «Գալիլէ» կրէյսէրը։ Սկսվեց նաւատորմատեսը։ Ծովը փառաւոր տեսարան էր ներկայացնում։ «Գալիլէ» կրէյսէրը անցնում էր բազմաթիւ զինուորական նաւերի միջով, որոնք զարդարված էին դրօշակներով, էկիպաժների որոտալից ուռայի ուղեկցութեամբ։ 3 ժամ 50 րոպէին նաւատեսը վերջացաւ։ Կայսրը վերադարձաւ «Շտանդարտ» զբօսանաւը, որը կանգնած էր արևմտեան նաւակայանում «Վէրիտէ» զրահակրի մօտ։ (Հ. Գ.)

Շէրբուրգ, 18 յուլիսի

Հանրապետութեան նախագահը ժամանեց կայսերական «Շտանդարտ» զբօսանաւը և դիմաւորեց Թագաւոր կայսրի և Թագուհի կայսրուհու կողմից։ Նաւի առագաստի վրա ծածանվեց հանրապետութեան նախագահի դրօշակը։ «Ադմիրալ Մակարով» կրէյսէրը ողջունեց թնդանօթաձգութեամբ։ «Դէմոկրատի» զրահակրից եղաւ պատասխան թնդանօթաձգութիւնը։ Հանրապետութեան նախագահի հետ ժամանեցին ծովապետ Տուշար, գեներալ Նամադ, մայոր Գիզ։ Կայսրը, ուղեկցութեամբ պալատի մինիստր բարոն Ֆրեդերիկսի, փոխ-ծովապետ Նիլովի, ֆլիգել-ադիւտանտ Դրէնտէլնի, հանրապետութեան նախագահի հետ միասին գնաց «Գալիլէ» նաւը, ուղեկցված թնդանօթաձգութեամբ «Ադմիրալ Մակարով» կրէյսէրից։ «Գալիլէի» վրա ծածանվեց կայսերական զինադրօշը, ողջոյնի թնդանօթաձգութեամբ «Դէմոկրատի» նաւից։ «Կայսրը և նախագահը «Գալիլէ» նաւով անցան նաւակայանում կանգնած բոլոր նաւերի առջևից, որոնց կօմանդաները ողջունեցին Նորին Մեծութեանը ուռայի աղաղակներով։ Նաւերի առջևից անցնելուց յետոյ կայսրը և հանրապետութեան նախագահը շքախմբի անդամների հետ միասին գնացին «Շտանդարտ» զբօսանաւը, ուր այդ միջոցին ժամանեցին և կայսրի շքախմբի անդամները «Պօլեարնայա զվեզդա» նաւից։ Մօտաւորապէս չորս ժամին հանրապետութեան նախագահը մարսէլիէզի հնչիւնների ուղեկցութեամբ գնաց «Վէրիտէ» նաւը։ 4 ժամ 20 րոպէին կայսրը ծովային համազգեստով, ուղեկցութեամբ բարոն Ֆրեդերիկսի, ծովապետ Նիլովի, ֆլիգել-ադիւտանտ Դրէնտէլնի և կայսրի անձի տրամադրութեան ներքոյ տրված անձանց, գնաց շոգենաւակ կատերով «Վէրիտէ» զրահակիրը փոխ-այցելութիւն գործելու համար հանրապետութեան նախագահին։ Ցերեկվայ վեցերորդ ժամին կայսրը վերադարձաւ «Շտանդարտ» զբօսա- [illegible] ծաղիկներով և դրօշազարդով. Փողոցները եռում են ոգևորված ամբոխով։ (Հ. Գ.)

Պարիզ, 18 յուլիսի

Խօսելով Շէրբուրգում տեղի ունեցած տեսակցութեան մասին՝ «Տան» լրագիրը ասում է. «Այսօրվայ տեսակցութիւնը ապացոյց է այն համակրութեան, որ ֆրանսիական և ռուս ազգերը տածում են դէպի բանականութեան այն դաշնակցութիւնը, որ կապվեց 1891 թւին։ 18 տարիների ընթացքում ֆրանս-ռուսական յարաբերութիւնների էութիւնը չը փոխվեց. Ռուսաստանը վերջնականապէս կանգնեց սահմանադրական ուղու վրա և դաշնակցութիւնը Ֆրանսիայի հետ, դրա շնորհիւ, օրէ-ցօր աւելի սերտ կը կը դառնայ»։ «Ժուրնալ-դէ-Դէբա» ուրախութիւն է յայտնում այն բանի առթիւ, որ Ֆրանսիան և Ռուսաստանը, չը նայելով զանազան կողմերից գործ դրված ջանքերին, անյողդողդ հաւատարիմ մնացին միմեանց։ Այն վայրկեանին, երբ կայսրը ժամանեց ֆրանսիական ջրերը, ամբողջ Ֆրանսիան միացնում է իր ծովագնացների ողջոյնի աղաղակներին իր ողջոյնները և բարի գալստեան բարեմաղթութիւնները։ «Պտի-Պարիզիէն» ասում է. «Երկիրը ուշադրութեամբ նայում է այն պետութիւնների երկու գլուխների վրա, որոնք իրանց ետևից ունեն անկեղծ բարեկամութեամբ միացած սրտերով միլիօնաւոր մարդիկ»։ (Հ. Գ.)

Շէրբուրգ, 18 յուլիսի

Ի պատիւ Նոցին Մեծութիւնների տրված հանդիսաւոր ճաշի, որ կայացաւ «Վէրիտէ» զրահակրի վրա, Ֆալիէր հետևեալ բաժակաճառը արտասանեց ֆրանսերէն. «Ձերդ Մեծութիւն. ես անկեղծ ուրախութիւն եմ զգում, ողջունելով Ձերդ Մեծութեանը և Նորին Մեծութիւն Կայսրուհուն երրորդ ճանապարհորդութեան առիթով, որ կատարում էք Դուք դէպի մեր երկիրը Ձեր թագաւորութեան օրից։ Ֆրանսիան և նրա կառավարութիւնը խորին կերպով երախտապարտ են այն անփոփոխ համակրութեան և անյողդողդ բարեկամութեան նշանների համար, որ ցոյց է տալիս Ձեր Մեծութիւնը։ Ձեր ներկայութիւնը այսօր Շէրբուրգեան նաւահանգստում մի նոր ապացոյց է այդ զգացմունքների. նա սրբագործում է այն դաշնակցութիւնը, որ միացնում է մեր երկու կառավարութիւնները և ազգերը ու արդարացի կերպով համարվում է երաշխաւորութիւն միջազգային խաղաղութեան, մի բան, որ թոյլ է տալիս ապագայում ևս ոչ պակաս աջող հետևանքներ, քան այն, որոնց հասցրեց նա անցեալում։ Յայտնելով բարեկամութեան այն զգացմունքները, որ Ֆրանսիան տածում է դէպի Ռուսաստանը, ես բարձրացնում եմ իմ բաժակը ի պատիւ Ձեր Մեծութիւնների, Նորին Մեծութիւն Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի և ամբողջ Կայսերական Տան։ Ես խմում եմ Ռուսաց Կայսրութեան՝ ֆրանսիական հանրապետութեան դաշնակցի և բարեկամի մեծութեան և բարգաւաճման կենացը»։ Ի պատասխան Ֆալիէրի խօսքերի կայսրը արտասանեց ֆրանսերէն հետևեալ բաժակաճառը. «Պարոն նախագահ։ Ողջոյնի այն խօսքերը, որ հէնց նոր ասացիք, խորապէս յուզեցին Մեզ՝ Կայսրուհուն և Ինձ։ Ամեն անգամ անկեղծ գոհունակութեան զգացմունքով մօտենում եմ Ես Ֆրանսիայի ափերին։ Իմ նախկին ժամանումների յիշողութիւնները ձեր գեղեցիկ երկրում խորապէս տպաւորվեցին Իմ յիշողութեան մէջ։ Բացի ջերմ համակրութիւններից, որ Ես անձամբ տածում եմ դէպի Ֆրանսիան, Ես նոյնպէս, որպէս և դուք, պարոն նախագահ, մնում եմ հաստատ համոզված այն բանում, որ դաշնակցութիւնը Մեր երկու երկրների միջև ներկայացնում է ընդհանուր խաղաղութեան թանգագին երաշխաւորութիւն, և բարեկամութեան այն սերտ կապերը, որ միացնում են Ռուսաստանը Ֆրանսիայի հետ, ապագայում, որպէս և անցեալում, իրանց բարերար ազդեցութիւնը կը գործեն։ Եթէ Ինձ Բրէստանի դաշտերում առիթ տրվեց զմայլելու ֆրանսիական զօրքով, այսօր Ես անկեղծ ուրախութիւն եմ զգում, հնարաւորութիւն ստանալով յարգանքի [illegible] և որին հէնց նոր ներկայ էի։ Ոգևորված սրտագին համակրութեան և անփոփոխ մտերմութեան զգացմունքներով, որոնցով համակված է ամբողջ Ռուսաստանը, Ես բարձրացնում եմ Իմ բաժակը ձեր կենացը, պարոն նախագահ, դաշնակից Ֆրանսիայի մեծութեան կենացը և Ես խմում եմ ֆրանսիական փառաւոր նաւատորմի բարգաւաճման կենացը»։ (Հ. Գ.)

Շէրբուրգ, 19 յուլիսի

Ճաշի ժամանակ «Վէրիտէ» զրահակրի վրա Ֆալիէրի աջ կողմը գրաւեցին տեղեր՝ կայսրը, կայսրուհին, ֆրէյլինա իշխանուհի Օբոլէնսկայա, արտաքին գործերի մինիստր Իզվօլսկի, ֆրանսիական ծովային մինիստր Բուէ-դը-լա-Պէյրէր. ձախ կողմը նստած էին՝ ֆրէյլինա Բիւցօվա, Պարիզի ռուսական դեսպան Նէլիդօվ, ֆրանսիական զինուորական մինիստր գեներալ Բրէկ։ Ծաղիկներով և էկզոտիկ բոյսերով հոյակապ զարդարված սեղանը 94 հոգու համար էր պատրաստված։ Երեկոյեան ֆրանսիական և ռուսական նաւատորմի նաւերը շքեղ կերպով լուսավառված էին։ (Հ. Գ.)

Շէրբուրգ, 18 յուլիսի

Յուլիսի 19-ի առաւօտեան կայսերական «Շտանդարտ» նաւի վրա մաղթանք կատարվեց ներկայութեամբ Նոցին Մեծութիւնների, Թագաժառանգ Ցեսարևիչի, Օգոստափառ Դուստրների և շքախմբի անդամների։ Ցերեկվայ մէկ ժամին «Վէրիտէ» զրահակրի վրա կայացաւ նախաճաշ։ Կենտրոնական տեղերը սեղանի շուրջը գրաւած ունէին Նոցին Մեծութիւնները։ Թագուհի կայսրուհու կողքին նստած էր նախագահ Ֆալիէր, ապա արտաքին գործերի մինիստր Իզվօլսկի։ Կայսրի կողքին նստած էին մինիստր Պիշօն, զինուորական և քաղաքացիական շքախմբի անդամները։ Նախաճաշից յետոյ Նոցին Մեծութիւնները օրհներգի հնչիւնների ուղեկցութեամբ գնացին «Շտանդարտ» զբօսանաւը։ Հէնց այսօր Նորին Մեծութեանը ներկայացաւ զինուորական մեդալի ասպետների ազգային դաշնակցութեան պատգամաւորութիւնը և Ղրիմի պատերազմի վետերանների ներկայացուցիչները, որոնք մատուցին Նորին Մեծութեանը մեդալ հետևեալ մակագրութեամբ. «Chevaleresques adversaires jadis actuellement fideles amis». («Երբեմն ասպետական բարեկամներ, այժմ հաւատարիմ բարեկամներ»)։ Կայսրը «Վէրիտէի» վրա յանձնեց քաղաքի մէրին 10,000 ֆրանկ Շէրբուրգ քաղաքի աղքատների համար։ Երեկոյեան «Շտանդարտ» զբօսանաւի վրա ի պատիւ Ֆալիէրի կայացաւ հանդիսաւոր ճաշ։ Յուլիսի 20-ին առաւօտեան կայսերական նաւատորմը ճանապարհ է ընկնում Կօուս։ (Հ. Գ.)

ԽԼՐՏՈՒՄՆԵՐ ՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Մադրիդ, 18 յուլիսի

Հանգստութիւնը վերականգնված է Ֆիգերասում։ Ձերբակալված են 22 մարդ. մի քանիսը փախան արտասահման։ Արագոնիայում ժողովրդական մասսաները չը միացան յեղափոխութեանը։ Սարագոսում, շնորհիւ ձեռք առած միջոցների, գործադուլային շարժումը աջողութիւն չունեցաւ։ Մադրիդում հանգստութիւն է տիրում։ Կառավարութիւնը փակեց ժողովրդական տունը։ Կալանաւորված են սօցիալիստական կուսակցութեան պարագլուխներ Պաբլօ, Իգլէսիաս և ուրիշները, որոնք նախապատրաստել էին գործադուլը։ (Հ. Գ.)

Պարիզ, 18 յուլիսի

Պրէպինիանից ստացված տեղեկութիւնների համեմատ, Բարսէլօնայի կօմենդանտը ծանուցանում է, որ քաղաքում կարգը վերականգնվեց։

Հաւասին հաղորդում են Բարսէլօնայից, որ կանօնաւոր զօրքերի շնորհիւ, որոնց թիւը քաղաքում մօտ 8000 է, դրութիւնը բարւոքվեց։ Յոյս ունեն, որ կանօնաւոր զօրքերը աւելի ևս ուժեղանալով կարելի կը լինի վերջնականապէս վերականգնել կարգը քաղաքում։ (Հ. Գ.)

Լօնդօն, 19 յուլիսի

«Դէյլի-Տելեգրաֆ» լրագրի յատուկ թղթակիցը հեռագրում է Բարսէլօնայից, որ յուլիսի 15-ին տասնեակ քահանաներ և միանձնուհիներ անխնայ կերպով սրի անցկացվեցին. Նրանցից մի քանիսը սպանվեցին սեղանների վրա, ծունր իջած խաչելութեան առաջ, միւսները սրբութիւնները յեղափոխականների դէմ քաջութեամբ պաշտպանելուց յետոյ։ Վերջինները ամեն տեղ հրդեհում էին տները, ամբողջ քաղաքը կարծես կրակի ծովի մէջ էր լողում։ Խուժանը արգելում էր Կարմիր Խաչի կառքերին մտնել վանքերը։ Միանձնուհիներին յետ էին մղում այրվող շինութիւնների պատուհաններից և նրանք կենդանի այրվում էին կրակում։ Այրվողներին ոչ ոք օգնութիւն չէր հասցնում։ Սպանվածների թիւը 120-ից աւել է, վիրաւորվածները 300 մարդ են։ Ամեն տեղ գործում են Կարմիր Խաչի ամբողջ պրօցէսիաներով անցնում էին քաղաքի փողոցներով, ձեռքերի և ձողերի վրա ունենալով իրանց զոհերի գլուխները և մոխրացած մասերը, «վիվատ» աղաղակներով և մարսէլիէզի երգեցողութեամբ։ Գեներալ-կապիտանը, որի աչքերի առջև անցնում էին յեղափոխականները, չէր վստահանում կրակելու հրաման տալ։ «Դէյլի Տելեգրաֆի» Գէնուայից ստացած տեղեկութիւնների համեմատ Բարսէլօնայում մինչև երեքշաբթի առաւօտը երկու կողմից ևս սպանված են աւելի քան 100 մարդ։ Փողոցներում տեղի ունէին սարսափելի տեսարաններ։ Դեռ մինչև երեքշաբթի երեկոյեան փողոցներում ամեն տեղ ընկած էին սպանվածներ և վիրաւորվածներ։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 18 յուլիսի

Անհիմն են ռուսական մամուլի մէջ սպրդվող դիտաւորեալ տեղեկութիւնները Թէհրանից։ Պարսկական նոր կառավարութիւնը ամենևին թշնամական դիրք չէ բռնում դէպի Ռուսաստանը, այլ, ընդհակառակն, ազգայնականների միջև կազմվեց ռուս-պարսկական մերձաւորութեան ընկերութիւն։ Թէհրանի կօմիտէտը կտրական հրաման ուղարկեց գաւառական անջումաններին՝ դադարեցնել հակառուսական ագիտացիան։ Խօսք անգամ չը կայ կօզակների բրիգադան վերացնելու մասին. Նա առաջվան պէս շարունակում է իր ծառայութիւնը և կառավարութեան կատարեալ վստահութիւնն ու յարգանքն է վայելում։ (Հ. Գ.)

Թէհրան, 18 յուլիսի

Դիպլօմատիական մարմինը յուլիսի 18-ին շնորհաւորութիւններ մատուցեց Սուլթան-Ահմեդ շահին գահակալութեան առիթով։ Պաշտօնական ունկնդրութիւնից յետոյ դիպլօմատիական մարմինը ընդունվեց խնամակալ Ազիդ-իւլ-Միւլքի կողմից։ (Հ. Գ.)

Թէհրան, 18 յուլիսի

Կալանաւորված են արտիլերիայի հրամանատար Մէջիդ-ուդ-Դովլէ, Թէհրանի նախկին ոստիկանապետ Սարդար-Աֆխամ և 3 մուշտէիդ։ Դատի է ենթարկված ֆինանսների նախկին մինիստր Կօվամ-ուդ-Դովլէ, որը նորերս գանահարել տուեց մի պարտատէրի, որը եկել էր փող պահանջելու նրանից։ Կախաղան բարձրացվեց Սանի-Հազրէթը՝ այն միլիցիայի հրամանատարը, որ կազմել էր շահը կանօնաւոր զօրքերին օգնելու համար։ Հրացանի բռնվեց Մուֆախար-իւլ-Միւլքը՝ Թէհրանի նախկին փոխ-նահանգապետը։ Մուշտէիդ շէյխ Ֆազուլլի մահվան պատիժը յետաձգված է այսօրվայ սէլամի պատճառով։ (Հ. Գ.)

Թ է հ ր ա ն.—Շիրազից ստացված յուզիչ տեղեկութիւնների պատճառով, Թէհրանի անգլիական դեսպանութիւնը կարգադրել է Բուշիրից ուղարկել այնտեղ 45 հոգի մի գնդակացիրով Շիրազի անգլիական հիւպատոսարանի պահակների թիւը ուժեղացնելու համար։ («Р. У.»)

Թէհրանից հեռագրում են «Нов. Вр.»-ին, որ նոր կառավարութեան դրութիւնը չափազանց դժուարին է։ Պաշտօնեաների մէջ րէակցիօնէրներ են։ Մանուկ շահը շրջապատված է հին րէժիմի կողմնակիցներով։ Նիւթական միջոցներ չունենալը, քանիմաց մարդկանց պակասութիւնը կառավարութեանը դնում է ծանր պայմանների մէջ։

Բախտիարների խան Էմիր-Մոֆախը, որ դեռ ևս հաւատարիմ է գահընկէց շահին, մի ամբողջ զօրամասի գլուխ անցած պտտում է Թէհրանի շրջակայքում և ոյժեր հաւաքում Սիփէհդարի դէմ։ Շահի զօրքերից շատերը հրաժարվում են զէնքերը յանձնել։ Զէնջանում, Ռաշտին մօտիկ, ապստամբել է մօլլա Կուրբանալին և հրաժարվում է ճանաչել նոր շահին։ Տեղի են ունենում լուրջ անկարգութիւններ։ Շիրազում, որը ապստամբել է նոր կառավարութեան դէմ, մեծ քաղդութիւններ են սպասվում։ Անգլիան մի զօրամաս է ուղարկում անգլիացիների շահերը Շիրազում պաշտպանելու համար։ Նոր կառավարութիւնը Շիրազի նահանգապետ է նշանակել նախկին րէակցիօներ՝ խստաբարոյ Ալլա-Դովլէին։

Թէհրանի նոր ոստիկանապետ Եփրեմը ապօրէն կերպով կալանաւորեց ֆրանսիական մի քաղաքացու և քաղցած պահեց նրան բանտում երեք օր. ֆրանսիական դեսպանատան պահանջով միայն ազատվեց։ Նոր կառավարութիւնը յարքունիս է գրաւում նախկին շահին հաւատարիմ մնացած բարձրաստիճանաւորների տներն ու կայքը։ Թէհրանում տրամադրութիւնը գնալով աւելի է լարվում։

Թէհրան, 19 յուլիսի

Քաղաքային հրապարակի վրա կախաղան բարձրացվեց շէյխ Ֆազուլլան։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 19 յուլիսի

Յուզումն է նկատվում Թաւրիզի երկու ամիս ռոճիկ չը ստացած ոստիկանութեան մէջ։ Գաղտնի խորհրդակցութիւններ են տեղի ունենում։ Անկարգութիւններ բռնկվեցին այն ագիտացիայի միջոցով, որ բարձրացրեց մօլլա Կուրբանալին Սիփէհդարի կուսակցութեան դէմ։ Մի քանի օր յառաջ լուր է պտտում, որ Ղաջարի և Մակուի խաները դիտաւորութիւն ունեն գալ իրանց ձիաւորներով Թաւրիզ իրանց ազգականներին և նրանց գոյքերը պաշտպանելու համար։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկոսի օծումը

Էջմիածնի սինօդը խնդրում է մեզ յայտնել ի գիտութիւն հայ ժողովրդի, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II-ի կաթողիկոսական օծումը տեղի կունենայ սեպտեմբերի 13 ին, Խաչվերացի տօնի օրը։

Կ. Պօլիս, 18 յուլիսի

«Թիւրքի» լրագրի աշխատակցի հետ խօսակցութեան մէջ մեծ վէզիրը հերքում է այն լուրերը, որ իբր թէ բանակցութիւններ են լինում Թիւրքիայի միացման վերաբերմամբ երեքպետեան դաշնակցութեան հետ։ Հիլմի-փաշայի ասելով Թիւրքիան մտադիր չէ միանալ պետութիւնների որևէ խմբակցութեան հետ, այլ կը հետևէ ազատ ձեռքերի քաղաքականութեան, ջանք թափելով ներքին զարգացման և զօրքն ու նաւատորմը ուժեղացնելու վրա։ (Հ. Գ.)

Տաշկէնտ, 18 յուլիսի

[illegible] ընդգծեցին երկրաշարժ 8000 կիլօմէտրից աւելի տարածութեան վրա։ (Հ. Գ.)

Լայպցիգ, 18 յուլիսի

Հինգհարիւրամեայ յօբելեանի առիթով Լայպցիգի համալսարանը արժանացրեց փիլիսոփայութեան դօկտորի «honoris causa» աստիճանի պրօֆէսոր Ռոստովցեվին։ (Հ. Գ.)

Ուլմ, 18 յուլիսի

Քաղաքի վրայով կէսօրից յետոյ 5 ժամ 15 րօպէին թռաւ «Ցէպպէլին 2-րդը», որը գնում էր Ֆրանկֆուրտ Մայնի վրա։ Ֆրիդրիխսհաֆէնից օդապարիկը թռաւ 3 ժամ 40 րօպէին։ (Հ. Գ.)

Ֆրանկֆուրտ Մայնի վրա, 18 յուլ.

Կոմս Ցէպպէլին աջողութեամբ իջաւ. հաւաքված հասարակութիւնը ջերմապէս ողջունեց նրան։ (Հ. Գ.)

Բերլին, 18 յուլիսի

Վօլֆի գործակալութեանը հաղորդում են Տօկիօյից, որ «Կօկումին» լրագիրը կիսապաշտօնական յօդուածում յայտնում է, որ կարելի է սպասել դիպլօմատիական յարաբերութիւնների խզման Չինաստանի հետ։ Մինչև այժմ չաջողվեց լուծել տարաձայնութիւնները Արդուն-Մուկդէն երկաթուղու հարցի վերաբերմամբ, այն ինչ այդ պահանջում են Եապօնիայի թէ անկասկածելի իրաւունքները և թէ միջազգային դրութիւնը։ (Հ. Գ.)

Նիւ-Եօրկ, 18 յուլիսի

Մէքսիկայի մի քանի տեղերում երկրաշարժ եղաւ, որը նշանաւոր վնասներ պատճառեց։ Ակուլկա քաղաքի մի մասը աւերված է. շատ մարդիկ կոտորվեցին։ (Հ. Գ.)

Լօնդօն, 18 յուլիսի

Շօտլանդական քարածխային շրջանում սպասվող գործադուլի առաջն է առնված մի համաձայնութեամբ, որով մերձակայ երեք տարիների ընթացքում ամենապակաս օրավարձը որոշվելու է 6 շիլինգ։ (Հ. Գ.)

Դիպլօմատիական շրջաններում պտտող լուրերի համաձայն, Թիւրքաց Մուհամմէդ V օգոստոսի վերջերում գալու է Լիվադիա։ Թիւրքաց սուլթանին ուղեկցելու է արտաքին գործերի մինիստրը։ («Рѣчь»)

Լ օ ն դ օ ն.—Դիպլօմատիական շրջաններում լուր է պտտում, որ Մադրիդի զօրքը անցաւ յեղափոխականների կողմը։ («Р.»)

Վ ի է ն ն ա.—Այստեղ տեղեկութիւն է ստացվել, որ Բարսէլօնան գտնվում է յեղափոխականների ձեռքում։ («Р.»)

Մէքսիկա, 19 յուլիսի

Ամսի 18-ին քաղաքում երկրաշարժը պատճառեց միայն աննշան վնասներ։ Մի քանի ճեղքուածքներ տուեցին մայր եկեղեցու պատերը Չիլպանինգօ տեղում։ Չիլպանցօյում աւերվեցին տներ, կոտորվեցին հարիւրաւոր մարդիկ։ Մեծ աւերումներ եղան նոյնպէս Իգուալում, Գուէրկրօ շտատում։ Մարդկային զոհեր չը կան։ (Հ. Գ.)

Մէքսիկա, 18 յուլիսի

Յուլիսի 18-ին կէսօրից յետոյ նորից [illegible] որի ազդեցութեան տակ շատ տներ ցնցվեցին։ Վնասուածքներ չը կան։ (Հ. Գ.)

Ակապուլկօ, 19 յուլիսի

Ծովի կողմից կատարելապէս քարուքանդ եղան բոլոր տները։ (Հ. Գ.)

Օսակա, 19 յուլիսի

Յուլիսի 18-ին առաւօտեան աջողվեց կանգնեցնել կատաղի ծաւալ ստացած հրդեհը։ Կրակը լափեց 13,000 տներ։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ախալցխա, 16 յուլիսի

Այս տարի մեր շրջանում սպասվում է առատ բերք, որը բոլորովին անսպասելի էր։ Մեր հողագործները, որ 2—3 ամիս առաջ սովի ուրուականն էին տեսնում, այժմ շատ ուրախ և գոհ են։ Երկար ժամանակ անձրևներ չը լինելու պատճառով երևի հացաբոյսերից յարդ քիչ կը ստացվի, բայց ուռճացած հասկերը մոռացնել կը տան այդ պակասութիւնը։ Եթէ ամսիս 8-ին և 10-ին թափված թեթև անձրևները հաշւի չառնենք՝ մեր շրջանում վաղուց անձրևներ չեն եղել։ Անյայտ է մեզ, թէ ինչ բերք է սպասվում այգիներից։

Մինչև 50°R-ի հասնող շոգեր եղան Ախալցխայում։ Ինչպէս պատմում են, այսպիսի շոգեր Ախալցխայում առաջին անգամն է լինում։ Մուրադ Ասպետ

Ջ ա ն ո ւ կ, 16 յուլիսի

Երէկ երեկոյեան ժամը 9-ից մի փոքր անց լսվեց ստորերկրեայ խուլ բոմբիւն, որին յաջորդեց երկրի թեթև ցնցում։ Տատանումը տևեց մօտ 5 վայրկեան։ Ընթացքը արևելքից արևմուտք էր։ Վնաս ոչինչ չեղաւ։

Գեղունի

Գ ա ն ձ ա կ, 18 յուլիսի

Քսանհինգ օր էր, որ տեղիս Կորիւնապատ քաղաքամասի 300 տնից բաղկացած համայնքը ջուր էր խնդրում՝ իր պարտէզները և բանջարանոցները ջրելու համար, որոնք չորանալու վտանգին էին ենթարկված։ Բայց համայնքի աղերսանքը մնում էր «Ձայն բարբառոյ յանապատի»։

Ամսիս 16-ին այդ քաղաքամասի բնակիչները, յոյսները կտրած բոլոր պաշտօնական հիմնարկութիւններից, որոնց դիմել էին վաղօրօք պատգամաւորների միջոցով, և հայ այգեպէտերից, ուրիշ ելք չը գտնելով, բահերով, բրիչներով յարձակվեցին քաղաքիս երկրորդ մասի այգիներին պատկանող չորս գետակների վրա ու բոլոր ջրերը մի տեղ ժողովելով բաց թողեցին Կորիւնապատ։ Կանայք մինչև անգամ մեծ օգնութիւն էին հասցնում՝ տալով տղամարդկանց ցեխ և քար։

Կիմայ

Դ ո ւ ր ա, 17 յուլիսի

Հրէայ Եւդա Շաբաթայ-օղլին յուլիսի 13-ին վերադառնալու ժամանակ Նիւգէլին գիւղից դէպի քաղաք, իր էշուկով, գործերով ծանրաբեռնված, սպանվում է ճանապարհին անյայտ չարագործների ձեռքով։ Չարագործներն եղած-չեղածն էլ տանում են։ Ասում են, թէ նրանից մօտ 200 ր. փող էլ են կողոպտել։ Այդ գործի համար ոստիկանութիւնը մեծ ջանքեր է գործ դնում։ Չարագործներին կալանաւորելու համար Նիւգէլինում և քաղաքում խուզարկութիւններ են կատարվել մի քանի տներում։

Մ. Սալամբէգեան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԶԱՐՁԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին անգամ թւում է թէ շատ դիւրին է մի կարգադրութեամբ առաջն առնել մեր ուսուցիչների պաշտօնափոխութեան։ Բաւական է մի հրաման արձակել դպրոցական հոգաբարձուների անունով և պատուիրել, որ առանց թեմական ուսումնարանական խորհրդի կողմից պատասխան ստանալու չարձակել և ոչ մի ուսուցիչ իր պաշտօնից, և վերջացաւ. թէ ուսուցիչն ազատված կը լինի իր անկերպարան վիճակից և թէ դպրոցը ազատված կը լինի ուսուցիչների շուտ-շուտ փոխելուց առաջացած վնասներից։

Սակայն դա սխալ է, դա կը նշանակէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Թիւրքին կեղծիքը.—Ապակեդրոնացում.—Մեր յեղափոխական պետերու պատրանքը և շուարումը.—Հոսանքին դէմ.—Պէտք չէ վհատիլ.—Պոլսոյ հայ մամուլին դերը.—Գաղթելու խնդիրը։

Թիւրքիոյ սահմանադրութիւնը հռչակուելուն պէս «Մշակ» գրել տուաւ, որ Թիւրք և քրիստոնեայ ցեղեր հաշտ ապրելու համար միակ միջոցն է ապակեդրոնացումը։

Այդ բառը տասնեակ ամիս առաջ անվեհերութեամբ կը յիշուէր նոյնիսկ Ելդըզի մեծ բռնակալին քթին տակ։ Ու երբ տապալեցաւ հին բռնակալութիւնը, ջնջուեցաւ և ապակեդրոնացում բառը. և հիմա ազատ Թիւրքիոյ մէջ այդ բառը արտասանելու ազատութիւն չկայ։

Սակայն պիտի թելադրեմ օսմանեան խօսարանին հայ երեսփոխաններուն, որ օրինաւոր պահանջ մը համարին ապակեդրոնացումը. եթէ երկիւղ կը զգան, ուրեմն տակաւին օսմանեան տէրութիւնը բռնակալներու ձեռքն է։

Թիւրքը իր կաղ քաղաքականութեամբ իմացուց, որ կը գտնուի գոյութեան կռուի ողմոտ դաշտին վրայ. այդ պարագային մենք հայերս ստիպուած ենք ուշադիր ըլլալ Լոնկֆէլլօյի.

«Մի լինիր քշուող, անլեզու ոչխար,
Այլ հերոս եղիր կռուի դաշտին մէջ»։

Թիւրքը կը ստիպէ, որ զէնքը մեր ուսէն վար չառնենք. ու հայը ինքնապաշտպանութիւնը պիտի յարգէ։

Սահմանադրութենէն վերջը՝ յեղափոխական կուսակցութիւնները Պոլիս խուժեցին. Թիւրք կուսակցականները յաղթանակի դրօշով իրենց տունէն ձգեցին մեր յեղափոխականները. և մերոնք կաթիլ մը խելք չունեցան ըմբռնելու, որ անոյշ, խնդում անոյշ մեղրով կը ձերբակալուէին. և յանուն օսմանցիութեան կը մոռցուէր յեղափոխական դաշտին վրայի քաջարի մարտիկներու նահատակումը, կը մոռցուէր յանուն ազգութեան 1895-ի 300,000 հայութեան խողխողումը, կը մոռցուէին հինգ դարերէ ի վեր Թիւրքին մեր գլուխը թափած հայաջինջ կրակի սահանքները։ Ու յեղափոխական միամիտ պետեր եկեղեցիներու, մզկիթներու մէջ Օսմաններու հետ կը համբուրուէին։ Այս կծու դիտողութիւնս տարի մը առաջ կանխաւ ըրած եմ։ Ո՞վ կարևորութիւն տուաւ։

Ես ալ խաբուած էի։

Կը կարծէի, թէ, ինչ որ ալ ըլլայ, մեր կուսակցականներու մէջ՝ անտարակոյս դիւանագիտական ծրագիր մը կայ և ըստ այնմ կը բանան առագաստնին։

Ես ալ խաբուած էի։

Մեր կուսակցական պետերը կատարելապէս գինովցած էին սահմանադրութեան արբեցուցիչ խոստումներովը։

Ուրեմն կը պակսէր հեռատեսութիւնը։

Չկրցան անդրադառնալ թէ ինչու Ահմէդ Րիզան կը յորդորէր, որ ամեն հայ մտաւորականներ ու հռչակաւոր անհատներ արտասահմանէն հայրենիք վերադառնան. և չկրցան ըմբռնել, թէ ինչ նպատակով ես կը հակառակէի, կը դիմադրէի, կը գրէի, որ շուտ է, շատ շուտ, թէ գաղթականները արտասահմանէն գաղթելու չեն։

Հեռատեսութիւնը կը պակսէր անոնց՝ որոնց որ ձեռքն էր հայուն ճակատագիրը։

Ապահով եմ, որ այդ առաջնորդները, որ տասը ամիս առաջ գինովցած էին եղբայրակցական երդումներու շրջանին, հիասթափած են հիմա Ադանայի ջարդով շուարած։

Մինչդեռ հանգամանքները կը հաւոցեն, որ վճռական դիրքով մը կարող ենք փրկել ազգին ջախջախուած լաստափայտը։

Թիւրքը տարբեր հոսանքի մէջ դրած է մեր նաւը. սակայն մեր նաւը Թիւրքին յանձնելու չենք. եթէ ունինք ազգի առաջնորդներ, անոնց գիտել կուտանք, որ հակառակ հոսանքներու դիմադրելը ցեղի մը քաջութեան հաւաստիքն է. երկիւղ, փափկանկատութիւն, պահպանողական խոհեմութիւնը մեր ներկայ կացութեան մէջ՝ ծայրայեղօրէն անմտութիւն է. քաջութիւն պէտք է. հակառակ հոսանքին անձնատուր ըլլալու չենք. Սմայլս թէև տիեզերահռչակ խոհական լուրջ անձնաւորութիւն մըն է, սակայն ինքն է որ կըսէ. «Հոսանքի դէմ լողալու համար՝ զօրութիւն և քաջութիւն է հարկաւոր, մինչդեռ հոսանքի հետ՝ սատկած ձուկն ալ կը լողայ»։ Համոզուած ունիմ, որ ամենէն պզտիկ հայն ալ պիտի չուզէ սատկած ձուկ մը ըլլալ։ Ալ համոզուինք, որ մեր չկարծած Թիւրքերն էին Ադանայի ջարդը կազմակերպողները. անոնք հիմա գռեհիկ սարսափութեամբ կուզեն, որ ներում ըլլայ դահիճներուն. ազատ Թիւրքիան ուրեմն մեր մարտիրոսացումի պատկերին առջև հիացած կը մնայ։ Ես չեմ սխալիր, երբ ըսեմ, որ Թիւրքը բաղդով ձեռք ձգած սահմանադրութեամբ դեռ գինովցած՝ անբանացած կը մնայ. բաղդով յաղթանակի արդիւնքն է այդ. Աննիբալ բաղդով կը յաղթանակէր ու գինովցած՝ Տրասիմէնի պատերազմէն վերջը, արիւնի լճին առջև հիացած, սքանչացած՝ պշած կը մնար։

Ես ինչ որ կը նկատեմ, Ադանայի ջարդէն վերջը հայութիւնը չափազանց վհատած կերևի։ Մեր ամենէն դժուար կացութեան մէջ վհատութիւնը շատ վնասակար է. յարգելու ենք բարոյախօս անձնաւորութեան մը սա յորդորը. «Վհատութիւնը երբեք մէկու մը օգնած չէ, և պիտի չօգնէ դժուարութեան մը յաղթելու համար»։ Կընդունիմ որ դժուար կացութեան մէջ ենք, բայց նման կացութիւններ նորութիւններ չեն մեզի համար. աւելի լքուցիչ օրեր ու շրջաններ ունեցած ենք և կրցած ենք անվհատ ապրիլ։ Հիմա ալ կրնանք փրկութեան ճամբան գտնել. բաւական է, որ կուսակցական պետերը գլուխ գլխի տուած՝ հայ ճակատագրին վրայ լրջօրէն մտածեն, ելք մը գտնեն և բացարձակ խելացի մտալու դիւանագիտութիւնը յարգեն։

Մամուլին՝ մանաւանդ Պոլսոյ մամուլին վրայ խոհականութեան պարտականութիւնը կը ծանրանայ. ոմանք հոն լացնելու դերակատարութիւնը ստանձնած են, ոմանք քաջութիւն կը համարին բառերով ամբոխումը։ Կարծեմ ժամանակն է, որ ամեն խմբագիր համախմբուած մամուլի ժողով մը գումարելով՝ որոշեն թէ ինչ քաղաքականութեամբ գրիչ շարժելու են։

Ջայլող խմբին մէջ կը գտնուին վհատեցնողներ ալ. քիչ են անոնք, որ Թիւրքին գլխին թակակոփ կը խիղդեն, սակայն այդ դրութիւնն ալ սխալ է. թող ժողովրդին սորվեցնեն, թէ Թիւրքին հետ ապրելու է։

Պէտք չէ շատանալ՝ ըսելով որ վէրք ունինք, վէրքին դարմանը սորվեցնելու ենք։

Յուսահատ բարեկամ գրիչ մըն ալ կայ, որ, ասպարէզ առած, իր արտագրաւ գաղափարականներով՝ շուարում կը պատճառէ... արդէն իսկ ճարահատ ժողովուրդին։ Վոհմակային Թիւրք խուժանէն մեր ազգութիւնը վախցնելու չենք։ Հայը օսմանեան տէրութեան քաղաքացին է, ու հիմա ատենը չէ որ յորդորենք թողնել-գաղթել հողէն, որուն վրայ դարերով ապրեր ենք. գաղթելու մասին առ այժմ վճռական խօսքը միամտութիւն է։

Կարող են մեզի ցոյց տալ զմեզ մարթողներու անհամար ջոկերը. այդ պարագային պիտի յորդորեմ մեր նահատակ ազգը, որ քիչ մը սպարտական ըլլայ. սպարտացին չէ հարցուցած թէ որքան է թշնամիին բանակին թիւը, այլ թէ ուր է թշնամին. թշնամին որ հիմա ըմբռնած է, թէ հայն ալ ունի ինքնապաշտպանութեան իրաւունքը, կարծեմ անխոհեմութիւն պիտի ըլլայ յուսահատութեամբ թողնել-փախչիլ հայրենիքէն։

Մեր հայրենիքի քաղաքացին մենք ենք. դիմադրելու ենք, մինչև որ ժամանակը որոշէ մեր առնելիք վճռական վերջին քայլը։ Սպարտացի ըլլալու ենք ամեն պարագային. Նոյն խիզախ ցեղը կայացնէր քաղաքացի փախստականը, անոր վրայ քուրձ մը նետելով կը չարչարէր զայն, ժողովուրդը անոր բարև չէր տար. փախստական սպարտացին ամենէն անարգուած արարածն էր։

Դարերը հայուն սորվեցուցին դիմադրել և անզէն ոչխար չըլլալ։

Ամեն պարագայի մէջ՝ ըմբռնելու ենք, որ արիութիւնը կեանք է և սքանչելի առաքինութիւն, իսկ յուսահատ երկիւղը ամեն պարագայի մէջ անախորժ անձնապաշտութիւն է։

Ն

բաւականաչափ ուսումնասիրված չէ այդպէս մտածողների համար, թէ ինչ պատճառներից են առաջանում ուսուցիչների պաշտօնափոխութիւնները, թէ իրապէս ինչ դեր են խաղում այդ խնդրում իրանք ուսուցիչները, թէ որքան հոգաբարձուները ենթարկվում են հոգևոր իշխանութեան կարգադրութիւններին, թէ ուսուցիչներին արձակելու խնդրում որքան ներգործող այլ պարագաներ ևս կան։

Դեռ հանգուցեալ Մակար կաթողիկոսը մտածեց այդ մասին, և առաջին երևոյթից, նայած նրա մտցրած կարգ ու կանոններին, այնպէս էր երևում, որ արդէն վերջացան, սահման դրվեցին ուսուցիչների և հոգաբարձուների կամայականութիւններին։ Ուսուցչական ցուցակներ, դասագրքերի ու ռոճիկների կոպարներ, պաշտօնների մէջ հաստատվելու և արձակվելու մասին հրամաններ և այլն և այլն։

Այո, համեմատաբար պակասեցին, բայց ընդհանուր առմամբ դրութիւնը քիչ փոխվեց, թէև ամենքը կը խոստովանեն, որ Մակար կաթողիկոսը, իբրև վարիչ, բնաւ թոյլերից չէր և իր սահմանած կարգերը կարելոյն չափ ամուր պահողներից էր։

Կարգապահութեան և օրինապահութեան էութիւնը բռնի կերպով պահել տալու մէջ չէ այնքան, որքան դրված կարգերի և օրէնքների ուղիղ, կեանքի պայմաններին համապատասխանող, իմաստուն լինելու մէջ։ Իսկ սրա համար պէտք է ըստ ժողովրդական առակի՝ «տասը չափել մէկ կտրել»։

Մենք միշտ ձգտում ենք օտարներից, պատրաստներից ընդօրինակել, բայց շատ քիչ ենք զբաղվում մեր կեանքի լուրջ ուսումնասիրութեամբ։

Անգլիայում այսպէս է, Շվէյցարիայում այնպէս է, Ամերիկայում սապէս է, բայց ինչպէս ենք մենք, ինչքան անգլիացի, շվէյցարիացի, ամերիկացի ենք մենք, ինչպէս են մեր կուլտուրական, մեր իրաւական, մեր նիւթական, մեր ընտանեկան, քաղաքական պայմանները, այդ բնաւին մոռացութեան են տրված։

Պարզ է, որ քանի սահմանված կարգերը, դրված կանոնները, արձակված հրամանները, արված պահանջները չեն լինի նախապէս լաւ չափված, կշռված և չեն լինի մեր կեանքի իրական պայմանների և ներքին թելադրութիւնների համեմատ, աջողութիւն չեն գտնի գործադրութեան ժամանակ։

Ուսուցիչներին իրանց պաշտօններից արձակելու պատճառները վերացնելու համար անհրաժեշտ է դպրոցական կեանքը տնտեսականի կողմից անկախ դարձնել, հոգաբարձուների կամայականութիւններին վերջ դնել։ Քանի որ մեր դպրոցների տնտեսական վիճակը ամբողջովին կախված կը լինի հոգաբարձուների աշխատասիրութիւնից ու նրանց կամքից, ոչ մի հրաման չէ կարող սահմանափակել նրանց իրաւունքները ուսուցիչների արձակելու կամ չարձակելու նկատմամբ։ Քանի որ ուսուցիչների պաշտօնավարութիւնների նկատմամբ արդար աստիճանակարգութիւններ տեղերի, դասերի, թոշակների, գիտութիւնների ևայլն մասին չեն սահմանվի, ոչ մի հրաման չէ կարող արգելել ուսուցչին ձգելու իր պաշտօնը և հեռանալու։

Առհասարակ նկատված է, որ քաղաքների դպրոցներում հոգաբարձուներն են, որ արձակում են ուսուցիչներին, իսկ գիւղական դպրոցներում ուսուցիչներն են, որ թողնում հեռանում են իրանց պաշտօնից։

Այս շատ հասկանալի է։ Միևնոյն ցենզի տէր թեմական դպրոցաւարտներ են մեր ուսուցիչները մեծ մասամբ։ Ամենքն էլ ցանկանում են ու ձգտում մեծ քաղաքներում պաշտօններ ձեռք բերել. որին այդ աջողվում է՝ նա դողում է իր պաշտօնի վրա և բողոքում է իրան արձակելու դէմ. իսկ նրանք, որոնք չեն կարողացել քաղաքներում պաշտօն ստանալ, ակամայ գնում են գիւղեր տարին մի կերպ անցկացնելու համար։ Հէնց վերջանում է տարին, ոչ մի պայմանով մնալ նոյն տեղում նրանք չեն համաձայնվում. թողնում հեռանում են, քաղաքներում, ինչպէս որ լինի, պաշտօն գտնելու նպատակով։ Սրա՛նք էլ բողոքում են քաղաքների դպրոցի ուսուցիչների անփոփոխ լինելու դէմ։ Այս «ինչպէս որ լինի» այս «քաղաք» ու «գիւղ» պարագաների մէջ շատ ուսումնասիրելի խնդիրներ կան։ Այս խնդիրները պէտք է պարզել ու լուծել նախապէս։

Անհրաժեշտ է կարգի բաժանել ուսուցչական պաշտօնները՝ նայած դպրոցի տեղին, ծաւալին, նիւթական պայմաններին. այսպէս և պէտք է կարգի բաժանել ուսուցիչներին՝ նայած ուսուցչի ցենզին, անցեալ ծառայութեանը, ընտանեկան ու կենցաղական պայմաններին։

Մեր դպրոցական կեանքը կարգաւորող իշխանութիւնը իր կարգադրութիւնները օրինաւորելու համար անհրաժեշտօրէն պիտի նախապէս դպրոցի նիւթականը ազատի հոգաբարձուների, երէցփոխների, շատ տեղերում նաև տանուտէրների քմահաճութիւնների, կամայականութիւնների տակից։

Այս բոլորից յետոյ միայն պէտք է ուսուցիչներից որը որպիսի դպրոցներում որքան ժամանակ պաշտօն վարելու, մի տեղի ու աստիճանի պաշտօնից մի այլ տեղի ու աստիճանի նոր պաշտօն ստանալու մանրամասնութիւնները որոշել ու տրոհել։

Քանի որ—կրկնում եմ—մեր դպրոցների նիւթական կացութիւնը գրեթէ ամբողջովին կախումն ունի հոգաբարձուների աշխատասիրութիւնից, անձնական բարեյօժարութիւններից և այլն և այլն՝ ինքը թեմական առաջնորդը և աւելի բարձրը չեն կարող կատարել տալ դպրոցի վերաբերեալ կարգադրութիւնները հակառակ հոգաբարձուների կամքի։ Սրանք միշտ դիւրութիւն ունեն իրանց ուզածը, իրանց կամքը առաջ տանելու։

Թեթև կը լինի լոկ բարոյական փոխադարձ պարտաճանաչութեան վրա յենված՝ յուսալ ու սպասել կարգ ու կանոն մտցնելը։ Բացի բարոյականից՝ պէտք է աւելի իրական և իրաւական հիմունքներ ստեղծել և սրանց վրա ձևել ու կառուցել մեր փոխադարձ պարտք և իրաւունքների մանրամասնութիւնները։

Այս նպատակի համար անհրաժեշտ է նախապէս ուսումնասիրել և լաւ ուսումնասիրել մեր կեանքը, մեր իրականութիւնը, մեր իրաւական ու նիւթական պայմանները, մեր գործիչների ու պաշտօնեաների հոգեբանութիւնը, ձգտումները, գիտութիւնը և ապա իրականութեան ներկայացրած փաստերի համապատասխան միջոցներ, կարգեր, կանոններ մշակել, դնել ու հաստատել։

Ապա թէ ոչ՝ թեթևօրէն արձակված հրամաններն ու կարգադրութիւնները չեն կատարվի մեր կեանքի մէջ, ինչպէս և չի կատարվի Թիֆլիսի ուսումնարանական խորհրդի կարգադրութիւնը ուսուցիչներին առանց խորհրդի թոյլտուութեան պաշտօնից չարձակելու մասին։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

ԽՕԼԵՐԱ

Պետերբուրգ, 18 յուլիսի.— Խօլերայից հիւանդացան 39, մեռան 19, հիւանդներ կան 615 հոգի։

Եարօսլաւլ.—Վոլգայի շոգենաւից տարան մի ճանապարհորդ, որը հիւանդացել էր խօլերայով։

Բերինսկ.—Խօլերայով հիւանդացան 2 հոգի։

Ռիգա.—Հիւանդացան 8, մեռան 2 հոգի։

Վիտեբսկ.—Հիւանդացան 19, մեռան 11 հոգի։

Արխանգելսկ.— Հիւանդացան 2 հոգի։

Նովգորոդ.—Մի շաբաթվայ ընթացքում նահանգում հիւանդացան 32, մեռան 18 հոգի։

Պետերբուրգ.—Ուրալեան շրջանում ժանտախտ տարածման դէմ կռուելու համար ուղարկված են 3 բժիշկ, 7 ֆելդշեր։

Պոլոցկ քաղաքում խօլերան շատ տարածվելու պատճառով ուղարկված է բժիշկ Ֆիլարէտով տեղի վրա պարզելու համար հիւանդութեան զարգացման պատճառները, նոյնպէս միջոցներ ձեռք առնելու նրա դէմ։

Պոլոցկ, 19 յուլիսի.—Յուլիսի 17-ին և 18-ին հիւանդացան 42, մեռան 11 հոգի։ Էպիդեմիայի սկզբից հիւանդացել են 601, մեռել են 103, հիւանդներ կան 186 հոգի։

Արխանգելսկ.—Խօլերայից հիւանդացան 5, մեռան 4. գաւառում հիւանդացան 14, մեռան 5 հոգի։

Բերինսկ.—Հիւանդացան 3, մեռաւ 1 հոգի։

Պետերբուրգ.— Հիւանդացան 41, մեռան 22, հիւանդներ կան 589 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ֆինանսների մինիստրը պահանջել է կովկասեան ադմինիստրացիայից՝ ներկայացնել Կովկասի հարկային բարենորոգումների նախագիծը, որի համաձայն պէտք է աւելացվի հարկային տեսուչների և նրանց օգնականների թիւը։ Յիշեալ նախագիծը պէտք է ուղարկվի Պետերբուրգ մինչև օգոստոսի 1-ը։

◆ Կովկասեան Փոխարքայի պալատի շէնքի համար պետական գանձարանը պարտ է Թիֆլիս քաղաքին 304,354 րուբլի 77 կոպէկ։ Այդ գումարը ստանալու համար քաղաքագլուխը դիմում է արել՝ խնդրելով փութացնել խնդրի քննութիւնը գլխաւորական խորհրդի մէջ։

◆ Թիֆլիսի ազնուականների հողային բանկում վերջացել են Թիֆլիս քաղաքի և ուրիշ քաղաքների աճուրդները ու սկսված են գիւղական շրջաններինը։ Թիֆլիս քաղաքի գոյքերից յուլիսի 15—16-ին աճուրդի են հանվել 54 կայք, որոնցից վաճառված է 13-ը միայն, մնացեալ 41-ը մնում է վաճառելու յուլիսի 31-ին։ Օտար քաղաքների կայքերից յուլիսի 13-ին և 14-ին աճուրդի են հանվել 36 կայքեր, որոնցից վաճառված է 13-ը և մնում է յուլիսի 31-ին վաճառելու էլի 26 կայք։

◆ Էջմիածնի գաւառի Աշտարակ գիւղի բնակիչ Յարութիւն Վարդազարեանցը յուլիսի 19-ին յայտնել է ոստիկանութեանը, որ յուլիսի 15-ին իր 18 տարեկան Տիգրան որդին, որ Ալէքսանդրօպօլի առևտրական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ է, Աշտարակի պօստ-հեռագրական բաժանմունքից ստանալով իր՝ գանգատ յայտնողի անունով փոխադրված 700 ր. գումարը, եկել է Թիֆլիս, ուր հանդիպելով իր համագիւղացի երկու հարազատ եղբայրներ Եսայի ու Գրիգոր Արամեանցներին, նրանց հետ միասին գնացին կոնծաքանելու։ Արամեանցներին Տիգրան Վարդազարեանցը յայտնել է, որ իր մօտ կայ 700 ր., որը կարել է անդրավարտիկում։ Կոնծաքանութիւնից յետոյ Տիգրան Վարդազարեանցը եկել է Գրիգոր Արամեանցի բնակարանը (Շերէմէտեվսկայա փողոց, տուն № 33) քնելու։ Առաւօտեան քնից զարթնելով նկատել է, որ փողը գողացված է։ Գրիգոր Արամեանցը և Տիգրան Վարդազարեանցը կալանաւորված են։

◆ Գլխաւոր զինուորական դատարանը փոխել է կովկասեան նահանգական դատարանի դատավճիռը Երևանում բամբակի առևտուրով զբաղվող գրասենեակի վրա զինված յարձակման գործի առիթով, որով մեղադրվող Սիմէօնեանն ու Շաւարեանցը արդար էին ճանաչված, իսկ Քիմինեանցը՝ դատապարտված տասնամեայ տաժանակիր աշխատանքի. գործը յանձնված է նոր քննութեան։

◆ Մոսկվայի լրագիրների ասելով, կառավարութիւնը սկզբունքով որոշել է առաջիկայ նոյեմբերի 1-ից կրկին պակասեցնել երկաթուղու երկրորդ կարգի գները՝ հասցնելով նրանց նախկին չափին։ Ինչ վերաբերում է առաջին և երրորդ կարգերին, նրանք կը մնան անփոփոխ։ Գները՝ իջեցնելու պատճառն այն է, որ, գները թանկացնելուց յետոյ, 3-րդ կարգի վագօններով երթևեկողների թիւը չափազանց աւելացել է և վագօնները չեն բաւականացնում, իսկ միւս կողմից՝ ուզում են մի փոքր լցնել 2-րդ կարգի դատարկ վագօնները։

◆ Թիֆլիսի այգեգործական դպրոցում այսօրվանից բացվում են համառօտ դասընթացներ մրգեր չորացնելու, պահելու և արտահանելու գործնական միջոցների մասին։ Զբաղմունքները սկսվելու են առաւօտեան ժամը 9-ից։

◆ Արձակուրդից վերադարձել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Ն. Զօկչայեվ։

◆ Արձակուրդ է գնացել Թիֆ. քաղաք. վարչ. անդամ Ա. Մ. Արղութեանը։

◆ Պարտադիր որոշում է հրատարակված, որի համաձայն Թիֆլիսի փողոցներում լրագրավաճառների թիւը սահմանափակվում է։

◆ Ալէքսանդրեան այգու զինուորական թանգարանին կից մասը կարգադրված է վերաբանալ հասարակութեան համար։

◆ Յուլիսի 18-ին Պեսկօվսկայա փողոցում № 29 էլեկտրաքարշի տակն է ընկել Գէօրգի Հարասրի և ստացել ջարդուածքներ ամբողջ մարմնի վրա։

◆ Էջմիածինսկայա փողոցում յուլիսի 19-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամը 9-ին, չորս անյայտ չարագործներ ատրճանակի մի քանի գնդակներով սպանում են նոյն փողոցից անցնող պարսկահպատակ Մամէդ-Ալի Հիւսէյին-օղլուն։ Ոստիկանութիւնը անմիջապէս շղթայելով դէպքի վայրը, կալանաւորեց 46 կասկածելի անձնաւորութիւններ։ Հաւաքած տեղեկութիւնների համաձայն սպանութիւնը կատարված է անձնական վրիժառութեան հողի վրա։ Սպանվածը զբաղված էր զէնքեր առնելով ու Պարսկաստան փոխադրելով։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Չորրորդ քաղաքամասում տեղական ոստիկանութիւնը զինուորական պահակախմբի օգնութեամբ շուրջկալ կատարելով Վօրոնցովսկայա փողոցում՝ կալանաւորել է 4 հոգի անցագիր չունեցող անգործ մարդկանց։ 22 հոգի էլ կալանաւորված են 6-րդ քաղաքամասում։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

Յուլիսի 14-ին Սպիտակ քաղաքի գործարանների պարսկահպատակ բանւորներն ու ծառայողները Շիբայէվի ժողովրդական լսարանում տօնահանդէս էին կազմակերպել նուագածութեամբ Պարսկաստանի նոր շահ Սուլթան-Ահմէդի գահակալութեան առիթով։ Երեկոյեան ժամը 6-ից սկսած պարսիկները սկսեցին հաւաքվել։ Լսարանի մէջտեղում և բեմի վրա մի քանի սեղանի վրա դարսված էին զանազան մրգեղէններ։ Նուագում էին Շիբայէվի գործարանի բանւորների նուագախումբը և սազանդարները։ Պարսիկ կարգադրիչները սիրալիր կերպով ընդունում էին բոլոր ազգութիւնների բանւորներին ու ծառայողներին, որոնց թւում կային բազմաթիւ կանայք ու երեխաներ։

Տօնահանդէսը այցելել են պարսկական հիւպատոսարանի տեղական գործակալը և քարտուղարը։

Երեկոյեան մօտաւորապէս ժամը 10-ին բոլորին անխտիր բաժանեցին քաղցրաւենիքներ և հասարակութիւնը ցրվեց նուագախմբի և սազանդարների երաժշտութեան ուղեկցութեամբ։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Մոսկվայում քանի տարիներից վեր է, ինչ գոյութիւն ունի մանարան-ոստայնագործական (прядильноткацкое) ուսումնարան, որտեղից իւրաքանչիւր տարի դուրս են գալիս լաւ պատրաստված վարպետներ և բանւոր-ոստայնանկ ղեկավարներ Ռուսաստանի ֆաբրիկաների պահանջները գոհացնելու համար։ Ներկայումս այդ դպրոցը գտնվում է նիւթական ծանր դրութեան մէջ և փակվելու վտանգի առջև, որովհետև առևտրականների ընկերութեան և մի քանի ֆաբրիկանտների տուած նիւթական օգնութեամբ անհնարին է ծածկել քրօնիքական դարձած դեֆիցիտները, որոնք հասնում են տարեկան 20,010 րուբլու։ Դրա շնորհիւ դպրոցի առձեռն դրամագլուխները հալվում են և Ռուսաստանի մէջ իր նպատակներով միակ այդ հաստատութիւնը կարող է փակվել միջոցների պակասութեան պատճառով։ («Р. С.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Զուբալովի անուան ժողովրդական տան թատրոնում հայկական սեկցիայի թատերասէրների խումբը յուլիսի 18-ին ներկայացրեց «Խանում» կօմէդիան, 3 գործ., հեղ. Ցագարելու (թարգ. Արաքսեանի), և Գ. Սունդուկեանցի «Օսկան Պետրովիչը էն կինքում»։

Այնպիսի բազմամարդ հասարակութիւն էր հաւաքված դահլիճում, որ ասեղ գցելու տեղ չը կար։ Եւ այդ բազմութիւնը բաղկացած էր գլխաւորապէս այնպիսի տարրերից, որոնց համար իսկապէս կոչված է ծառայելու ժողովրդական տունը։

Երկու ներկայացումներն էլ ընդհանուր առմամբ անցան բաւարար։

«Խանումի» մէջ աչքի էին ընկնում իրանց խաղով Փիրումեան՝ Միկիչի դերում և տիկ. Տէր-Գրիգորեան մօցիքուլ Խանումի դերում։ Լաւ էր նաև օր. Թարխանեան մօցիքուլ Քաբատօյի դերում։ Մեծ բաւականութիւն պատճառեց իր աշխոյժ խաղով Մուրադեանը՝ Վանօյի տան ծառայ Մանուկի դերում, թէև պէտք է նկատենք, որ նա իր տիրոջ առաջ անգամ իբրև ծառայ չէր պահում իրան։ Օր. Վարսենիկ, ըստ երևոյթին, կարող էր աւելի լաւ խաղալ, հոգեկան յուզմունքներ արտայայտող միմիկա տալ կրթված օր. Սօնայի դերում, որը նա խաղաց սառը։ Միւսները թոյլ էին։

Բնորոշ է այն փաստը, որ կուպլէտները դառնում են սովորական երևոյթ մեր ժողովրդական ներկայացումների մէջ։ Փիրումեանը դուդուկի ներդաշնակութեամբ արտասանեց նոր կուպլէտներ, և, չը նայելով հանդիսականների քրքիջներին ու ծափերին, պէտք է նկատենք, որ թխված էին շատ անաջող։

«Օսկան Պետրովիչը էն կինքում» ներկայացվեց սահուն։ Օսկանի դերը կատարում էր Ց. Տէր-Գրիգորեան։

Սատանաների հրամանատար Սաթայէլի դերը միակն էր, որ, ըստ իս, սազում էր Գրիգորեանին։

Ներկայացումը, ի հարկէ, չանցաւ առանց միջադէպի։ Հասարակութիւնը, անկարգապահ լինելուց զատ, շատ էր աղմկում ներկայացումների միջոցին։ Երկու երիտասարդների միջև տեղի ունեցաւ տուր ու դմբոց և կռուի սիրահար զօչինները ուղարկվեցին ոստիկանատուն։ Լ. Դ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռ. Խան-Ազատ և Գ. Վարդանեան. Հայոց պատմութիւն (գլխաւոր կէտերը) 27 պատկերով և մի մեծ գունաւոր քարտէզով. VI բաժանմ. դասընթացի և ժողովրդ. ընթերցան. համար։

Հայոց պատմութեան վերոյիշեալ դասագիրքը կազմված է համաձայն հայոց եկեղ. տարրական դպրոցների ուսումնական ծրագրի։ Այս դասագիրքը ներկայացնում է իրանից մի շարք պատասխաններ, տրված ու դասաւորված այնպէս, ինչպէս պահանջվում է ուսման IV տարվայ կամ բաժանմունքի ծրագրով, ուր ասված է. «Հայաստանի իրական պատմութեան գլխաւոր կէտերը—գագաթնակէտերը»։ Յայտնի է, թէ որչափ դժուար է ժամանակակից ոգու և մանկավարժական պահանջների համաձայն կազմել դասագիրք, մանաւանդ հայոց իրական պատմութեան։ Այս խոստովանում են և իրանք կազմողները։ Հայ ժողովրդի անցեալը, ներքին կեանքը, նրա կուլտուրան դեռ ևս թաղված մնում են աւերակների տակ։ Պրոֆ. Մառի պեղումներն և ուսումնասիրութիւնները Անի քաղաքում՝ ապացոյց դրան։ Մինչև օրս գոյութիւն ունեցող հայոց պատմութեան դասագրքերը իրանց բովանդակութեամբ ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի շարք հէքիաթանման պատմուածքներ Հայաստանում տեղի ունեցած անվերջ աւերումների, թալանների և կոտորածների մասին՝ համեմված թեթև հայրենասիրութեամբ և զուրկ պրագմատիկան լուսաբանութիւնից։

Ի պատիւ վերոյիշեալ դասագրքի կազմողների պէտք է ասել, որ նրանք աշխատել են հնար եղածին չափ խուսափել նման այլ դասագրքերի պակասաւոր կողմերից և տալ պատմական անցքերի և փաստերի պատճառաբանական լուսաբանութիւնը, հիմնվելով հայոց անցեալի նորագոյն ուսումնասիրութիւնների և տեսութիւնների վրա։ Այս տեսակէտից միմիայն կարելի է ողջունել վերոյիշեալ դասագրքի երևալը, իբրև մի կարևոր ձեռնարկ տարրական դպրոցների սաների համար և ուսանելի գիրք ժողովրդի ընթերցող խաւերի լայն շրջանների համար։

Պատմութեան սկզբում անհրաժեշտ էր տալ տեղեկութիւններ Հայաստան երկրի աշխարհագրական պայմանների մասին և մանաւանդ բնորոշել երկրի առանձնայատկութիւնները և պարզել Հայաստանի աշխարհագրական դիրքի նշանակութիւնը (օգտաւէտութիւնը կամ վնասակարութիւնը), տնտեսական, առևտրական, քաղաքական և պատմական տեսակէտներից, մանաւանդ երբ վերոյիշեալ դասագիրքը առաջարկվում է նաև ժողովրդական ընթերցանութեան համար։ Ափսոս, որ պատմութեան ամենանշանաւոր, ճակատագրական դէպքերը նկարագրելիս չեն բերված մեր պատմագիրներից համապատասխան քաղուածքներ, ինչպէս օրինակ Աւարայրի ճակատամարտի նկարագրութեան հետ շատ տեղին կը լինէր մէջ բերել Եղիշէի պատմութիւնից կտորներ, որից աւելի ևս կենդանի ու վառ կերպով ընթերցողները կը պատկերացնէին այդ խոշոր պատմական անցքը։

Հայոց կաթողիկոսութեան մասին խօսելիս, պէտք էր յիշատակել նաև Սիսի և Աղթամարի կաթողիկոսներին։ Ռուսների Կովկասում հաստատվելու և հայերի գաղթի և Ռուսաստանում գաղթավայրեր հիմնելու մասին պէտք էր աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ. կարևոր էր յիշատակել և մէջ բերել Ալէքսանդր I կայսրի հայ ազգին տուած հրովարտակը, որը պերճօրէն լուսաբանում է հայ ժողովրդի կատարած դերը ռուսական գահին և սրա վերաբերումը առ հայ ազգը։

Դասագրքի լեզուն, չը նայելով տեղ-տեղ պատահող անհարթութիւններին, դիւրըմբռնելի է և մատչելի թէ սաների և թէ ժողովրդական ընթերցանութեան համար. ուստի այդ դասագիրքը օգտաւէտ է և դպրոցների դասաւանդութեան համար, և նաև կարդացող հասարակութեան, իբրև հետաքրքրական և շահեկան գիրք ընթերցանութեան համար։ Ա. Նազարէթեան

ՄԱՄՈՒԼ

Ի. Գ. ստորագրութեամբ մի պարոն, «П. Т.» լրագրի № 162-ի մէջ նախ ծաղրելով Մելեան քահանային «տէրտէր» մականունով, ապա այն կարծիքն է յայտնում, թէ իբր Մելեանը և նրա հետ «Մշակը» ուզում են իրանց ջանքերը՝ նսեմացնելու աշխարհական կամ հասարակական տարրի նշանակութիւնը դպրոցական գործի մէջ։

Հարկ չը կայ ասել մեր ընթերցողներին, որ Ի. Գ.-ի ասածը «Մշակի» մասին չարամիտ զրպարտութիւն է։ Ասել թէ «Մշակը», որ իր գոյութեան ամբողջ ընթացքում ահագին պայքար է մղել ժողովրդական իրաւունքի և հասարակական տարրերի ուժեղացման մասին մեր բոլոր ազգային-եկեղեցական-կրթական գործերի մէջ, կամենում է նսեմացնել աշխարհական տարրի նշանակութիւնը մեր դպրոցական գործի մէջ, դա կարող է միայն ասվել կամ չարամտութեամբ կամ անգիտակից տգիտութեամբ, իբրև հետևանք գործի չը հասկանալուն։

*

«Հովիւ» թերթը, որ բնաւ քաջութիւն չունեցաւ ասելու, թէ ինքն, արդարև, կղերական թերթ է, քանի որ ըստ էութեան այդպէս է, կամենում է այժմ էլ հայ ժողովրդի շլնքին փաթաթել ազգային-եկեղեցական գործերի յոռի ղեկավարութեան բոլոր պատասխանատուութիւնը, որ ամբողջովին ծանրանում է հայ եկեղեցականութեան վրա, քանի որ տիրող օրէնքների և պայմանների շնորհիւ իսկական տնօրինող նա եղել է։ Այն հանգամանքից, որ «Մշակը» հոգևորականութեանն է վերագրում պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը, «Հովիւը» հասնում է այն անհեթեթ եզրակացութեան, թէ «Մշակը» հայ ազգային-եկեղեցական վերածնութիւնը կարծես սպասում է ամբողջապէս հայ հոգևորականութիւնից։

Թող կղերական տէր-Եղնիկները հանգիստ մնան. մենք վաղուց համոզված ենք, որ տէր-Եղնիկներից որևէ վերածնութիւն անկարելի է սպասել։ Հայոց եկեղեցու մէջ վերածնութեան գործը ինչպէս սկսել է ժողովուրդը առանց տէր-Եղնիկների, այնպէս էլ առաջ կը տանէ առանց նրանց։

*

Աստրախանի «Լրաբեր» թերթը, վերջին համարներում տպելով Թիֆլիսի իր թղթակցի մի քանի ըստ սովորութեան տափակ և անհամ յօդուածները կաթողիկոսի գալստեան առիթով, իր կողմից ևս հարկ է համարել ամբողջ յօդուածներ նուիրել և յուսահատական ճիչեր արձակել այն մասին, թէ Իզմիրլեան նոր կաթողիկոսի գալստեամբ հայ բուրժուազիան նորից գլուխ է բարձրացնում և թէ ի զուր հայ ազգը որևէ բան յուսալու է Իզմիրլեանից։ Լրագիրը չէ խորշում նոյն իսկ թխել սուտ լուրեր, երբ իր թղթակցից յերիւրված, թէ իբր Իզմիրլեանը խոստացել է մի տեղ, «որ հայ կեանքում դասակարգային շարժումը կոչնչացնէ»։

Մենք չը գիտենք, թէ նոր կաթողիկոսը երբ և ուր է արտասանել այդպիսի խօսքեր. մենք գոնէ չենք լսել. բայց մենք գիտենք միայն այն ճշմարտութիւնը, թէ չէ կարելի մի գործչի դատել, առանց սպասելու նրա գործունէութեան հետևանքին։ Մենք սովոր ենք գործիչներին դատել իրանց գործերից։ Մենք շատ լաւ գիտենք, որ Իզմիրլեանը միայնակ ոչինչ անել չէ կարող առանց ժողովրդական լայն խաւերի աջակցութեան, և նա ինքը շարունակ իր ճառերի մէջ շեշտել է այդ հանգամանքը. բայց գիտենք և այն, որ մի արժանաւոր պետ հայոց եկեղեցու, աննկուն, հաստատակամքի տէր, մի իսկական ժողովրդասէր

Հովապետ կարող է մեծ գործեր կատարել նոյն իսկ այն դէպքում, երբ ժողովրդի կողմից քիչ աջակցութիւն գտնի։ Հայոց Կաթողիկոսը պէտք է ի նկատի ունենայ ամբողջ հայ ժողովուրդը և ոչ այս կամ այն դասակարգը։

*

Վերջերս, ինչպէս գիտենք, Արմաւիրում ձերբակալվեց մի հայ վաճառական Գենջ-Օղլուեան անունով, մեղադրվելով իբրև դաշնակցական, և Պետական Դումայի երկու անդամներ՝ Աջէմեան և Կիրեանով քայլեր արին արձակել տալու բանտարկեալին։

«Русское Знамя» սև-հարիւրեակային թերթը, սաստիկ բարկանալով այդ երկուսի միջնորդութեան առիթով, գրում է հետևեալը․

«Թւում է, թէ մի մարդի համար, որ պարապել է դրամաշորթութեամբ, այն էլ յեղափոխական մի կուսակցութեան գործի օգտին, ուղիղ ճանապարհն է բանտը․ բայց այդպէս չեն մտածում մեր «ճանաչված» յեղափոխականները, այն է կադէտները, Պետական Դումայի անդամներ՝ Աջէմեանը և Կիրեանովը, որոնք դիմել են Կուրլովին, միջնորդելով ազատել Գենջ-Օղլուին»։

Այժմ «Голосъ Москвы» թերթը, յայտնելով թէ Կիրեանովը ռուս ժողովրդի դաշնակցութեան Ռոստովի ճիւղի նախագահն է և Պետական Դումայի մէջ ծայրայեղ աջակողմեանների ֆրակցիայի անդամ, իր կողմից աւելացնում է իրաւամբ․

Своя своихъ не познаша («Իւրայինները իւրայինին չեն ճանաչում»)։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 13 յուլիսի

Թաւրիզի Հայոց Աղքատախնամ Ընկերութիւնը շնորհակալութեամբ յիշատակում է այն նուիրատուութիւնները, որոնք նա ստացել է վերջին ամիսներում։ Թէհրանից՝ հայ հասարակութեան մէջ հանգանակված գումարը երկու անդամով 3500 ղրան, Ղօչանից՝ մի քանի հայերից 330 ղրան, Թէհրանից՝ Ալէքսան-խան Գորոյեանից 400 ղր., Բագուից՝ եղբարք Թումանեանցներից 500 լիտր ցորենի արժէք 850 ղր., Ատրպատականի ռուսաց ընդհանուր հիւպատոսարանից 175 պուդ ալիւր, Թաւրիզի Պարսից Աղք. Ընկերութիւնից 200 լիտր ցորեն, Բագուից Ա. Մելիք-Աբրահամեանցի միջոցով այնտեղ շարունակվող հանգանակութիւնից 4000 ղր.։ Ընդհանուր գումարն է 9080 ղր., 175 պուդ ալիւր և 200 լիտր ցորեն։

Թողնելով մի ուրիշ պատեհ առիթի մանրամասն գրելու ընկերութեանս գործունէութեան մասին և թէ այն, թէ քաղաքիս պաշարման ամիսներում ընկերութիւնս որքան նպաստել է տեղիս տառապող հասարակութեան թէ փողով և թէ կենսական մթերքներով, օգտվում ենք առիթից յիշելու այն երկու խոշոր օգնութիւնները, որ ընկերութիւնս ճիշդ իր ժամանակին արեց երկու թալանված հայաբնակ գիւղերին, առաջինը՝ Մուժամբարը՝ ենթարկված Սամի-խանի և Բեօյիւք-խանի կողոպուտին, քանդվելու վրա էր, և ընկերութեանս 9610 ղրանի նպաստը ժամանակին օգնեց նրանց վերականգնելու իրանց տնտեսականը և պատճառ եղաւ գիւղացիների այս կողմ, այն կողմ չը ցրվելուն և գիւղի կայուն մնալուն։

Երկրորդ նպաստը Սալմաստի Սարամելիք գիւղինն էր, գումարը 3000 ղրան։ Այդ գիւղացիք էլ ենթարկվել են յայտնի աւերիչ Իգօ-խանի թալանին։

Ի դիմաց Թաւրիզի Հ. Աղք. Ընկ.՝ Անդամ-գանձապահ՝ Ջիբրայէլ Բուդաղեան

—

Մուշաշենակ գ. (Վարանդայի շրջ.), 14 յուլ.

Գիւղիս միդասեան երկսեռ դպրոցի հոգաբարձութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում բազմաթիւ հայրենակիցներին, որոնք, իմանալով տեղիս դպրոցի անել վիճակը, շտապեցին օգնել նուիրելով 100 ր.։

Հայրենակիցների մէջ դեռ տարիներ սրանից առաջ միտք էր յղացել ունենալ հայրենի գիւղում սեփական դպ. շէնք, բայց զանազան անակնկալ հանգամանքներից ստիպված չիրագործվեց այդ գովելի ցանկութիւնը։ Այժմ սեփական շէնքի մեծ կարիք է զգացվում։ Թող հայրենակիցները շտապեն իրագործել տարիներ առաջ իրանց յղացած միտքը, որով մեծ ծառայութիւն կը լինեն մատուցած հայրենի գիւղին։

Ի դիմաց հոգաբարձութեան՝ Նիկ. Յարութիւնեան

—

Ագարակ (Ղափանի շրջ.), 8 յուլիսի

«Մշակի» № 93-ի գաւառական տեղեկութիւնների բաժնում տեղիցս գրված մի նամակ էր լոյս տեսել «Որբիկ»ստորագրութեամբ։ Ի պատասխան այդ նամակի հարկ ենք համարում յայտնել, որ ճշմարտութիւնից զուրկ է այն, որ իբր թէ իմ հայր Գաբրիէլ քահանան հասոյթների մեծ մասը իւրացնում է թողնելով ճկւոր քահանաներին ձեռնունայն։ Չորրորդ տարին է, ինչ նա ծառայում է անկողնի և որին թէ հասոյթների, թէ հասարակական եկեղեցական խնդիրները, որպէս մօտ 90-ամեայ ծանր հիւանդ և աշխարհից հրաժարված մարդու, այնքան են հետաքրքրում, որքան չինարէնը։

Որբիկն ասում է, թէ երբ մեռելները 4—6 օր մնացել են անթաղ, բայց նա չէ յիշում, թէ այդ ծր մեռելն է 4—6 օր մնացել անթաղ և երբ։

Իրականութեանը չեն համապատասխանում Որբիկի և այն խօսքերը, թէ կազմված համախոհականները, շնորհիւ գիւղի քահանայի (իմ հօր) ինտրիգների, ջուրն են ընկել, որը կամենում է քահանայացնել իր թոռան, որին մերժել և մերժում է գիւղի հասարակութիւնը։ Իրողութիւնն այն է, որ, բացի մի քանի քահանայացու թեկնածուներից, ամբողջ գիւղը իր համախոսական ստորագրութեամբ ինքնակամ ընտրել է իմ հօր թոռն Գաբրիէլին Տէր-Սիմէօնեանին քահանայացու, խնդրելով հոգ. իշխանութիւնից, նկատի ունենալով կարիքը, փութացնել նրա ձեռնադրութիւնը։

Սիմէօն Տէր-Սիմէօնեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

18 յուլիսի

ԲՐԻՒՍՍԷԼ։ Յուլիսի 17-ին փակվեց պատգամաւորների ժողովի նստաշրջանը։ Հոկտեմբերի 6-ին կը բացվի պատգամաւորների ժողովի արտակարգ նստաշրջանը զօրքը վերակազմելուն վերաբերեալ օրինագիծը քննելու համար։

ՆՈՎՕՋԵՐԿԱՍԿ։ Զինուորական մինիստրի օգնականը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ՊՕԼՏԱՎԱ։ Սաստիկ փոթորիկ սկսվեց։ Էլեքտրական կայարանը դադարեց գործելուց․ հեռագրական հաղորդակցութիւնը ընդհատվեց հեռագրաթելերի փչանալու պատճառով։ Փչացան մեծ քանակութեամբ տնային թռչուններ․ մի քանի տեղերում ծառերը արմատախիլ եղան․ շուռ եկաւ գետի վրա լողացող նաւակը զբօսնողներով, որոնցից մէկը խեղդվեց։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ։ Առաւօտեան նիստի ժամանակ մինիստրների խորհուրդը վճռեց հրաժարական տալ։ Կաբինէտի հրաժարականն ընդունվեց, բայց թագաւորը խնդրեց մինիստրներին ժամանակաւորապէս մնալ իրանց պաշտօններում։

ԵԱՐՕՍԼԱՒԼ։ Յուլիսի 15-ին անցնող ուրագանից զանազան գաւառներում պոկվեցին շատ տանիքներ, քամու տրվեց յարդը, փչացան բանջարանոցները և այգիները, շատ վնասվեցին ցանքերը։

ՏՕԿԻՕ։ Այստեղ տեղեկութիւններ են ստացվում անսովոր հեղեղների մասին Մանջուրիայում։ Խեղդվել են աւելի քան 1000 մարդ։ Գիրինում ջրի տակն են մնացել 7000 տներ. Ջուրը շարունակում է աւելանալ։

Օսակայից հեռագրում են, որ այնտեղ բռնկվել է սաստիկ հրդեհ։ Վտանգը սպառնում է ամբողջ քաղաքին. կրակն արդէն ոչնչացրել է աւելի քան 1000 տուն, նոյնպէս Բուդդայի յայտնի տաճարը։ Մարդկային զոհեր շատ կան։

ՎԻԵՆՆԱ։ Պրագայի հակամիլիտարական դատում դատարանը հետևեալ վճիռը կայացրեց. 35 հոգի արդար են ճանաչված, 11 հոգի դատապարտված են բանտարկութեան երեքից մինչև հինգ ամիս, 7 հոգի մեղաւոր են ճանաչված զինւորներին դրդելու մէջ, որ նրանք խախտեն իրանց պաշտօնական պարտքը, 4 հոգի նորին մեծութիւնը վիրաւորելու մէջ։

19 յուլիսի

ԿՕԿԱՆԴ։ Գլխաւոր հրամանատարը նշանակել է Տաշքէնդում յուլիսի 29-ին մի նիստ իր նախագահութեամբ մարեխի սփռման բռնած տարածութիւնը որոշելու և նրա դէմ կռուելու միջոցներ գտնելու համար։ Նիստին հրաւիրված են նահանգապետներ, գաւառապետներ, բորսային կոմիտէը և բամբակի խոշոր ֆիրմաների ներկայացուցիչները։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Սենատը յատկացրեց 100,000 դոլլար Ջինաստանի և Հարաւային Ամերիկայի հետ առևտրական յարաբերութիւնները զարգացնելու նպատակով։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ։ Սէյսմօգրաֆները ընդգծեցին թոյլ երկրաշարժ նշմարելի տարածութեամբ։

ԱԿԱՊՈՒԼԿՕ։ Ծովի կողմից քարուքանդ եղան կառաբելապէս բոլոր տները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Հիւանդների բաժանմունքով
Թիֆլիս, Եկիզավետինսկայա փ., 79, հեռ. 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր.

ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդ. (երկուշ., չորեքշ., ուրբ.)։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը ջղային և ներքին հիւանդութիւններ։

Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։

Ս. Ա. ԼԻՒԻՐ—առ. ժ. 11—12-ը քթի բգի և ականջի հիւանդութիւններ։

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժ. 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։

Մ. Ե. ՄՋԱՐԵՈՒԼՕՎ—ցեր. ժ. 1—2-ը կաշուի և սիֆիլիսի հիւանդութիւններ (երեքշ., հինգշ., շաբաթ)։

Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. 1—2-ը կանանց հիւանդ. և մանկաբարձ.։

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստում։ Ծննդաբերութեան ընդունելութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կոպէկ։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից։

(կ. ե. ռ.) 236. 100—45

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Յ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—11—ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Փ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 ժ. ներքինն. և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ,

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—6— հ. ժ., մանկաբարձ., կանանց և երեխայոց։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքինք և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամառային երթեւեկութիւն
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԳՈՒ՝ ՊՕՍՏԱՅԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Եւլախ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ., Բալաջարի 4 ժ. 43 ր., Բագու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բագու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏԱՅԱՐ 1 ժ. 44 ր. գիշեր., Ալեքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Ջուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՊՐԱՆՔ. 5 ժ. երեկ.։ Ալեքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երեւան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.։ ՊՕՍՏԱՅԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱԳՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՅ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. առաւ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ.; ՄԱՐԴԱՏԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍ. 10 ժ. 38 ր. երեկ., ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՕԼԱԹԱՆԻ
(Մերվ քաղաքից մօտ 50 վերստ հեռու)
մի քանի հայ ընտանիքների մանկանց համար
հարկաւոր է
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
ռուսերէն և հայերէն պարապելու համար։
Պայմանների մասին դիմել Мервъ, Давиду Андреевичу Кеворкяну.
(օ. մ.) 668. 5—2

ՌՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՕԺԷՖ
Մելիք-Ջհանեանցի
Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։
(օ. մ.) 604. 20—7

Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆ
„ՔՆԱՐ“
Ժողովրդական երգարան (եւրօպական նօտաներով)։
Գինն է 1 ռուբ.
Հասցէ՝ Делижанъ, Степану Демуряну
կամ
Тифлисъ, книж. магазинъ «Гуттенбергъ».
(Հ. Հ.) 654. 5—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Հասկեր
№ 6 Յունիս
1. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.—2. ԲԱԲԻԿՆ ՈՒ ԳՈՀԱՐԻԿԸ (Նուէր փոքրիկ Բաբիկին), Նորայր Մալենցեանցի.—3. ԱՌԱԿՆԵՐ Աթ. Խնկոյեանի.—4. ԳՐԻԳՈՐԻ ԼՐԱԳԻՐԸ պատմուածք Է. Էլիասյի վրացերէնից փոխադրեց Ղ. Կարապետեան.—5. ԿԱՊԻԿԸ Սաղալեանի.—6. ԳԱՐՈՒՆ (ժողովրդական) Յովհ. Թումանեանցի.—7. ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆ կոմեդիա, փոխ. Կ. Մարիանեան.—8. ԱՒԱԶ, բնագիտական զրոյց Հերման Վագների.—8. ԴԷՍԻՑ-ԴԷՆԻՑ Ենոք Տէր-Ենոքեանի.—9. ՋՈՒԱՐՃԱԼԻՔ ՄԱՐԻԱՄ ՏԱՏԻԿԻ ՏՈՊՐԱԿԻՑ։
№ 7 Յուլիս
1. ՎԱԳՈՆԻ ՊԱՏՈՒՀԱՆԻ ԱՌՋԵՒ.—2. ԵՐԵԽԱՆԵՐՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ Շ.-ի 3. ՍՈՒՐԻԿՆ ՈՒ ՓԻՍԻԿԸ Հ. Հայրապետեանի.—4. ՅՈՒՍԻԿՆ ՈՒ ՅԱՍՄԻԿԸ Ս. Եսայիեկեանի.—5. ԱՄԱՌԸ Հ. Հայրապետեանի.—6. ԱՆՈՒՇԻ ՓԱՓԱԽԸ (գիւղական պատկեր) Սիմակի.—7. ՁԱՂԱՑ Աթ. Խնկոյեանի.—8. ՃԱՆՃ Աթ. Խնկոյեանի.—9. ՃԵՐՄԱԿԸ պատմուածք Լալ-Վար և Ս. Լ.—10. ՏԱՌԵՐԻ ՎԷՃԸ պատմուածք Յովհաննէս Քոսեանցի.—11. ԱՒԱԶ բնագիտական զրոյց Հերման Վագների. Թարգմ. Լ. Բարխուդարեան.—12. ԵՂՋԵՐՈՒՆ ԵՒ ԿՐԻԱՆ.—13. ԵՂՆԻԿՆ ՈՒ ՈՋԽԱՐԸ Գ. Մեսեան.—14 ՋՈՒԱՐՃԱԼԻՔ ՄԱՐԻԱՄ ՏԱՏԻԿԻ ՏՈՊՐԱԿԻՑ։
Այս №-ի հետ ուղարկվում է ձրի յաւելուած՝
1) «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ», XX, Վիկտոր Ռուսակովի՝ Մանկական ծիծաղը.
2) XXI Պրոֆ. Լ. Սովաժի՝ Բառոյագիտութեան դասաւանդումը Թարգմ. Միս. Ասիլեանի.
Տարեկան 4 ր. Тифлисъ, редакція „Аскеръ“

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի դասագիրք
ԼՈՅՍ ՏԵՍԱՆ.
Ա. տարի . . . . 30 կ.
Բ. տարի, երրորդ տիպ, բարեփոխ. . . . . . . 45 կ.
Երկուսն էլ ընդունված կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից իբրև դասագիրք պետական դպրոցների համար։
Տպագրվում են.
Գ. տարի . . . . 60 կ.
Դ. տարի . . . . 75 կ.
Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում՝ «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Բագւում՝ Сотрудникъ, Երևանում՝ Յովհաննիսեանի և Շուշում՝ Բ. Տէր-Սահակեանի։
ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԻՆ ԶԵՂՉ 20%
(կ. ե.) 20—4

Հարկաւոր են տնային
Մի վարժուհի
եւ
Մի դաստիարակչուհի
Վարժուհին պարապելու է մի տիկնոջ հետ քաղաքից դուրս, իսկ դաստիարակչուհին՝ քաղաքում։ Պայմանների մասին դիմել Майкопъ, Армянское училище, Г. Абазянцу, յանձնել Աւետիսեանին։
(օ. մ.) 677. 3—1

ԱԶԱՏ ՍԱՆՈՒԿԵԱՆԻ և ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ խմբագրութեամբ
կազմվում է
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ
Դասագիրք հայոց դպրոցների III և IV տարիների
Հարկաւոր են, անպայման վարձատրութեամբ, ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ, բացի վարձատրութիւնից և մրցանակ։ Երգերը լինելու են՝ տեքստով—բովանդակալից, գեղարուեստական և մանկան հասկանալի. մելօդիայով—ձևի կազմութեամբ տեքստին նմանվող՝ գեղեցիկ, մելօդիական և բնտմով հակիրճ։
Դիմել՝ Յաֆիանեան-Մարիամեան դպրոց (Бебутовская ул.) ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ։
(ե.) 626. 4—3

Ղուբայի հայոց եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր են՝
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
հայոց լեզուի, աշխարհագրութեան, հայոց պատմութեան, բնագիտութեան և երգեցողութեան համար, և
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
ռուսերէն, թւաբանութեան, ձեռագործի, ռուսաց պատմութեան և ռուսաց աշխարհագրութեան համար։
Պայմանների մասին դիմել դպրոցի հոգաբարձուհի օրիորդ Նատալիա Ներսիսեան Սարումեանցին։
(ա. օ.) 677. 4—2

ՈՒՍԱՆՈՂ-ՄԱԹԵՄԱՏԻԿ
ցանկանում է առաջիկայ ուսումն. տարում ուսուցչութեան տեղ ունենալ հայոց դպրոցներում։ Դիմել՝ Կարս, Գեղամ Բայբուրդցեանին։
(չ. կ. ե.) 662. 3—3

ՄԱՀ ԲԱՂԼԻՆՋՆԵՐԻՆ
Նորութիւն. ռէկլամ չէ.
«ԿԼՕՊՕՎԻՆ»
Շուտափոյթ ոչնչացնում է բաղլինջներին և նրանց սաղմը։ Սրուակի գինը 35 կոպ.։ Պահեստը միայն ԱԽՕԲԱՁԷԻ մօտ, ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Ուղարկում ենք վերադիր վճարով։ Դեղավաճառներին զեղչ։ Պահանջեցէք յամառօրէն «ԿԼՕՊՕՎԻՆ ԱԽՕԲԱՁԷ»։
Հասցէ՝ Тифлисъ, памятникъ Воронцова, ул. Некрасова, № 14, складъ Ахобадзе.
(օ. մ.) 568. 30—18

Ախալքալաքի
Հայոց եկեղ.-ծխական երկսեռ երկդասեան դպրոցների համար
Հարկաւոր են
Միջնակարգ կրթութեամբ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
շաբաթական 20—24 դասով, 20 րուբլի դասագնով, և մի փորձված աւագ-ուսուցիչ, որ աւանդելու է շաբաթական 16 դաս և ստանալու է ընդամենը 800 ր. տարեկան ռոճիկ։ Դիմել՝ гор. Ахалкалаки, Հոգաբարձութեանը։
Նախագահ՝ Վ. Կարապետեան
Քարտուղար՝ Ղ. Տէր-Գրիգորեան
(օ. մ.) 678. 3—1

ԲԱՑԱՌԱՊԷՍ «ՄՇԱԿԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ներկայ յուլիսի 15-ից մինչև առաջիկայ օգոստոսի 15-ը «Մշակի» բոլոր բաժանորդները՝ թէ Թիֆլիսի և թէ դրսի (նոյնպէս արտասահմանի) արտօնութիւն ունեն «Աղբիւր-Տարազի» Շտուտգարդում հրատարակած մեծադիր ֆօտօ-գրաւիւր ս. ԷՋՄԻԱԾԻՆ պատկերը (մինչև օրս հրատարակվածներից ամենաչքեղը և ամենագեղանին) հատը 1 ր. 50 կ. և ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատկերով մի դիւժին (12 հատ) բաց նամակ գինը 50 կ., ընդամենը 2 րուբլու փոխարէն ստանալ ՄԻ ՌՈՒԲԼՈՎ հանդերձ ճանապարհածախսով։
«Ս. Էջմիածին» պատկերը կարելի է ստանալ և պատրաստ շրջանակների մէջ՝ 1 ր. 50 կ. մինչև 3 ր. «Աղբիւր Տարազի» խմբագրատնից։
—
Պատկերն ու բաց նամակները բաժանորդին կուղարկվեն պատուէրն ստացած օրը պօստով, խնամքով ամրացված յատուկ խողովակներում։
«Մշակի» բաժանորդները պէտք է պօստային փոխանակագրի վրա կպցնեն իրանց տպված հասցէն, պոկելով «Մշակի» բանդերօլից։
Վերադիր վճարով կամ ապառիկ պատուէրներ չեն ընդունվում։
—
Պատուէրները պէտք է ուղարկել «Մշակի» կամ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնների հասցէներով։
Թիֆլիսի բաժանորդները ստանում են իրանց պատուէրը իսկոյն «Մշակի» կամ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւններից։
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ և ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատկերով 12 հատ բաց նամակներ մասնաւոր մարդկանց համար արժեն 2 ր., նոյնպէս և «Մշակի» բաժանորդների համար, օգոստոսի 15-ից յետոյ։ 665. 3—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտարարում է, որ առաջիկայ ուսումնական տարում
ՆՈՐԵԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
Ընդունելութեան քննութիւն
կը լինի միմիայն VII դասարանի համար։ Քննվել ցանկացողները պիտի ներկայացնեն իրանց վկայականները մինչև օգոստոսի 25-ը։ Մնացած դասարաններում տեղ չը կայ։ Վերաքննութիւնները և Նորեկների (VII դաս.) քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 25-ից։
(կ. չ. ե.) 646. 3—3

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.